ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ։

ԹԻՒ Դ. — ՇԲՋԱՆ Լ. **1874** ՏԱՐԻ Զ. — ՕԳՈՍՏՈՍ 30

ԿՐՕՆԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԹՈՎՄԱՍԻ

ՀՌՇԱՍՏԱՆԵՑՒՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՀԱՅԵՐԷՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ.

(Շարունակութիւն)։

ԳԼ. ԻԲ.

Երկրորդ ժողով ՅԱՆԻ, ուր ընդհանուր խոչիկ է կաթողիկոսութիւն Հայոց։

(Ամք Տեառն 972)։ — Սահմանեաց յաջորդ վահանայ յերկրորդում ամի Հայրապետութեան իւրոյ նզովս արձակել առ վահան և առ Ապուսահլ, որ պաշտպանեաց զնա. և նա առ սոյն Հայրապետ զիրարադարձն։ Առ որ Սահմանեսի ժողովել զբազմութիւն կրօնաւորաց ի Տարօնոյ, ի Հաշտենից, ի Ծոփոց և ի Խորձենոյ, ընդ որս և զՊոլսեցս վարդապետ և զՔաբիկէն վանական Սիւնեցի, զնոյ յաշխարհն Վասպուրականի ի յանդիմանութիւն վահանայ. այլ չէ սոցա հանդիպեալ արքայի և նմին վահանայ, աքսորին արքունի հրամանաւ Յովհաննէս կղզին, ուստի ի խոնարհիլ ոմանց ի նոցանէ առ Ապուսահլ և յարձակիլ յիւրաքանչիւր տեղիս, Սահմանեսս հայրապետ միայն վարեցաւ Ապուսահլայ ի կոտորոց բերդ, ուր կացեալ նորին առիս ինչ՝ մեռանի։

Ապա ըստ այսմ հանդամանաց յետ ամաց ինչ յամի 972, առաջնորդք Հայոց աշխարհի, ժողովեալ վերստին հրամանաւ Աշոտոյ հանդերձ եպիսկոպոսօք և վանականօք յարքայանիստն Անի, կացուցանեն ի Պաթուղիկոսութիւն Հայոց տանեայց Աթոռոյ՝ զԽաչիկ Երշարուհեաց Եպիսկոպոս զքեռորդի Անանեայ Հայրապետի։

Թէև ոմանք ըստ յորդորանաց արքայի Աշոտոյ խորհին զվահան վերստին կոչել յԱթոռն, այլ շատք ընդդիմացեալք յարուցին զեռաւորութիւն, վասն այնորիկ և զԽաչիկ կոչեցին։

ԳԼ. ԻԸ.

Ե՞ւ ԱՂՔԻՆ Ե ՆՐԿԻՐՔ ԺՈՂՈՎ Է ՀԱՐԻ, ԸՆԴ ՊԷՍ ԹՈՒՂԹԱԿԵՑԻ ԱՂԱՆԴԱՎՈՐԱՑ։

(Ամք Տեառն 1002)։ — Յանհետ Սարգիս Կաթուղիկոսի զաղանիլ Թոնդրակեցւոց, սկզբնաւորեալն յաւուրց Հինգերորդն Յովհաննու Կաթուղիկոսի Ովայիցւոյ զրեթէ յամս Տեառն 833, յորում կոչեցաւ նա ՀԱթոռ ըստ դնելոյ և մեռաւն Մագիստրոսի, դումարէ Ժողով եպիսկոպոսաց ի Հարք ըմբերանել զաղանդաւորսն և արմատախիլ զնոյն առնել, բաց ոչ կարացեալ յառաջնում Ժողովի որոշել զվճիռ լիճն, վերստին զումարեցան եպիսկոպոսք, վարդապետք, երիցունք և կրօնաւորք ջնջել իսպառ զաղանդ Թոնդրակեցւոց, որ ի սմին ժամանակի առաւել իբրև հուր արծարծեցաւ յատենս Սալոմի Հայրապետի. զի Յակովբոս եպիսկոպոս ոմն ի ժամանակին յայնմիկ առաջնորդ գաւառին Հարքայ ըմբռնեալ յաղանդ Թոնդրակեցի՝ կեղծաւորեալ առ երեսս՝ վարեր զնախատ կեանս քրձազգեացս, բռնագնաց և պահեցողութեամբ, որով խազմայ զնիրս յինքն յանկուցեալ՝ մանաւանդ յիշխանաց, քարոզէր՝ թէ պատարագք և նուիրմունք և աղօթք ոչ օգնեն վասն թողութեան մեղաց, այլ՝ որ մեղաւ, զոր ինչ ինքն գործէ յանձին իւրում, այն միայն օգնէ նմա. զայս քարոզեին և հետևողք նորա, և զինուել զանազանէն իսուրս աղքատաց՝ ամենևին ծաղրական գրեին. և հաղորդել Ժողովրդոց ի կենարար մարմին և արիւն՝ անգոնեին և զնոքօք ծիծաղէին, մինչև անկանել տարակոյս ի ժողովուրդն, ոմանց յիսկալ յառաջնորդին և ի հետևողաց նորին, և այլոց երկբայեալ ի խորհուրդ եկեղեցւոյ, որով շփոթ մեծ և շշուկ ծագեալ ընդ ամենայն տեղիս, հոգևորականք առհասարակ յաղօթս ապաւինեցան առ Աստուած՝ այց առնել և բառնալ զչարն ի միջոյ։

Եւ Հարք Ժողովին թէ և անդէն զառաջնորդն մոլորեցուցիչ զՅակովբոս դատապարտել կամէին և հատանել յեկեղեցւոյ, բայց տեսեալ թէ նա ապաւինեալ է յիշխանս և ինքեանք ոչ ունին ի ձեռին զչայանի յանցանս նորին, լռեցին վերստին յանձնեալ զդատաստան առն ի ձեռս Աստուծոյ, մինչև Սարգիս առաքեցաւ նորա Արինեցի՝ այր երկիւղած՝ ի վերայ հասեալ չար աղանդոյ վարդապետին և անօրէն գործոյն, ի ծագել խռովմանն ի միջ ազգին, վազվազակի ծանուցանէ սրբոյ Հայրապետին. որ և ձեռնտուութեամբ ոմանց իշխանաց առ ինքն բերեալ զՅակովբ եպիսկոպոս, ելոյծ զնա ի քահանայութենէ և ազուհատըրշմ ի ձեռնադրել, շրջեցուցանել տայ զնա ի հրապարակս, որոյ առաջի քարոզն աղաղակէր. ‘‘Որ ի սուրբ հաւատոյ Եկեղեցւոյ Քրիստոսի սողոսկեալ՝ յանօրէն Թոնդրակեցւոց ի մարդագէմ դաղանաց փարիսեան մտեալ միաբանի, դատ և իրաւունս զոյս կրեսցէ,,։

ԳԼ. ԻԹ.

ԵՐԲՈՐ ԺՈՂՎ ՀՆԱՑ՝ ՎԱՆ ՀՈՒՆՈՒԼԻԱՆ ՎԱՐՈՑ ՊԱՀՈՒԱԿՈՒՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ։

(Ամք Տեառն 1036)։ — Յովհաննու Ամրատայ արքայի Հայոց և նախարարացն դժուարացեալք ընդ յարատևութիւն

պետրոս կաթուղիկոսի Գետադարձն կոչեցեալ ի Սեբաստիա՝ և առանձնանալոյ ի նոցանէ զամս չորս ի Ս. Տապուրական ի Զորոյ վանս, սուտ երդմամբ վերադարձուցեալ զսուրբ Խայրապետն ՀԱՆի արքայանիստ, կալանաւորէ զնա և առաքէ յարգելանս ի մեծ ամուրն ՌՇՆի առ Ս. Հրամայ հօրեղբօր Գրիգորի Մագիստրոսի. և ապա բերեալ զԳէոսկորոս վանահայր Սանահնի կացուցանէ արքայ ի կաթուղիկոս. բայց երևելիք Եպիսկոպոսացն Խայոց ոչ ընկալեալ զնա, չեան թոյլ նմա ձեռնադրել զոք ՀԱՅպիսկոպոս, և չիշեն զանուշն ի պատարագի. ընդ որ և համօրէն ժողովուրդք չէնաձեն երբեք, բայց միայն յարքայէ և ի նախարարաց:

Ջանարգութիւն իւր առեալ Գէոսկորոսի յայս ամենեցուն, ինքնին ևս զգաւաւ իւր անարգեալ և ձեռնարկ լեալ յանարժանութիւն, կոչէ Եպիսկոպոսութիւն զանպիտանս և զվատթարս ի մարդկանէ, և յաթոռս վերսին՝ զմերժեալն վանս յայտնի յանցանաց. և զարժանաւորս և վիմաստունս մերժէ յիշխանութենէ, յափշտակեալ զնոցին ըստացուածս: Ընդ որ եպիսկոպոսք և վարդապետք Խայոց ի խորհուրդ եկեալ՝ նզովեն զարքայ և զնախարարան զպատճառն անակնկալ չարեացս:

Լուեալ արքայի և նախարարաց զայս գործ պաշտօնէից տանն Ըստուծոյ և յերկիւղ մեծ լեալ, բազում թախանձանօք և աղաչանօք հնարեալ դարձուցանել ըզՊետրոս ՀԱՅոն և խոստացեալ հնազանդիլ ի բանս նորա, նա ոչ զիջանի յաղաչանս նոցին՝ մինչև թագաւորն նախարարաց լուրց խորհրդով հրաւիրէն աղաչանօք զՅովսէփ կաթուղիկոս Աղուանից ի քաղաքն արքայական, ուր արքունի հրամանաւ լինի Ժողով մեծ Խայրապետաց, վարդապետաց, և իշխանաց՝ իբրև չորս հազար անձանց յամի 1036:

Ընդ ապա ամենայնիւ պարտաւորը զբառ զԳէոսկորոս, ընկենուն ՀԱՅոց, և պատառեալ զԽայրապետական Վէօղ յերեսս նորին, զոր ցայն վայր Խայրապետք զգլխով արիանէին, առաքեն յաքսոր յիւր նախնի վանս Սանահին, յետ հայրապետանալոյ նորա զամ մի և զքանի մի ամիս. և զամենայն զձեռնադրեալս ի նմանէ ընդ բանիւ արարեալ, ապաշխարանս ի վերայ նոցին կարգեն. և վերստին հաստատեալ զսուրբ Խայրապետն Պետրոս, կոչեն զնա ՀԱՅոց իշխանութեան:

Գ. Լ.

Երկրորդ Ժողով ի Խաչ՝ ընդդէմ Մոնոփսիտեցւոց:

(Ամք Տեառն 1051):—Յաւուրս դրբատութեան Գրիգորի Մագիստրոսի ի Միջագետս, երկուք ոմանք քահանայ առնուտրէ ի Մոնոքրակեցւոց, ի շնորհեցան Ըստուծոյ լուսաւորեալք ի գիտութիւն ճշմարտութեան, դիմեն յոտս նորին և պատեալ նմին զամենայն չարութիւն գործոց ազանդոց իւրեանց, մերժին յանդնութեան, զկնի եղեալք մին Պողիկարպոս և միւսն Սիկանորա, և աղաչեն զնա՝ բառնալ զանդն ի դաւառէ անտի, ցուցեալ՝ և ուրուրիք չարաղանդաւորաց ի նորա իշխանութեան՝ ի Միջագետս կային:

Ապա Գրիգոր Մագիստրոս զիմեալ ՀԱպահունիս յաւանն Մոնոքրակ, քակէ

ժողովատեղի նոցա և անդէն կատուցեալ զուտաճար անուամբ սրբոյն Գէորգայ, հաստատեալ զ[ա]զար առաջնորդ նոցին, պատուհասեալ զամենեսեան, սրբելով զանուղին. յորոց բազմաց ի Թոնդրակեցւոցն զարհուրեալք, դարձան յաղանդոցն, յորոց վերստին Յողով արարեալ անդր ի հաստատ յամի Տեառն 1051, հրամանաւն միլոսիլ հազարապետ բազմութեանն յանուն ամենասուրբ Երրորդութեանն ի ձեռն Եփրեմ Եպիսկոպոսին Ռշնոյ. ըստ որոյ և հալածեալքն ի նոյն աղանդաւորաց յամենեցունց և յայլազգեաց և, զառնային հետզհետէ և բնակեալ զիւրաւորութիւնն՝ մտանէին յիւղեղի սուրբ։

ԳԼ. ԼԱ.

Ե՞ՍՔԱՆ Յ՞ՈՂՈՎ Է ԱԽԱ—ԼԵՒՈՆ ՎԱՆ ԸՆԿԵՆԼՈՎ ՂԻՒԶԴ ԱՄԵՆՈՂՆԵ։

(Ամք Տեառն 1072)։—Գէորգ Լոռեցի յաւուրս պատրիարքութեանն Գրիգորի ի Կայսերի՝ հաճութեամբ իշխանացն կողմանց Ծամիպատայ՝ ի հրաժարել նորին Գրիգորի յանտառայ, ձեռնադրեցաւ ի նմանէ Կաթուղիկոս ի Թաւբլուր, բայց որպէս երևի՝ զղջացեալ ընդ այն ապա ի Կայսերին ի զբռնելոյ հակառակորդացն Գէորգայ, յետ երկար շփոթութեանցս այսոցիկ, առնէ ի Կայսերն Գրիգոր Յողով սահաւ Եպիսկոպոսացս և վարպետացս ի Սեաւ լերինն, և նոցին թելադրութեամբ ընկինու զԳէորգ յԱթոռոյ Հայրապետութեան, և վերստին վարէ ինքն զիշխանութիւնն ևկեալ ի Մուտատասուն։

Եւ թէև պատճառ այսր անկման Գէորգայ Լոռեցւոյ ինա ինքն համարի Ստ. Ջամչեան, իբր զբարելով նորա ընդ համակրութիւն Ղզին առ Կայսերն, և խռովութիւնս յարուցանել, յորմէ ըստիպեալ էին Գրիգոր ընկենուլ զինա յԱթոռոյ, բայց ես համարիմ զայն բարուբանք պատճառանին, վինչդեռ չէ հաստատեալ դրանս իւր վկայութեամբ ժամանակակից պատմագրաց. և զի համակրութիւն Ղզին առ առաջին Հայրապետն՝ զնաթդ առիթ զբարելոյ համարիցի առ ի Գէորգայ, երբ ինքն ևս հաճութեամբ ազգին ձեռնադրեալ էր Կաթուղիկոս յիւրմէ Լհատպետէն, առ որում լեալն էր առնադպիր։

ԳԼ. ԼԲ.

ԵՐԷՔՈՒՔ Յ՞ՈՂՈՎ Է ԱԽԱ—ԼԵՒՈՆ, ՈՐ ԾԵՐՑԵՑԱ Դ[ա]ՒԻԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՂԹԱՄԱՐԱՅ։

(Ամք Տեառն 1114)։—Իրև օծաւ ի Կաթուղիկոսութիւն Հայաստանեայց Գրիգոր Պալհաւունի եղբայր Շնորհալւոյն ըստ ընտրութեանն Խարսղի Հայրապետի ի մահուան իւրում յամի 1113, ի Կարմիր վանս Սեաւ լերին, համբաւ առեալ մահուան Խարսղի և կոչման Գրիգորի ի քաղաքավայ պատանեկութեանն՝ Դաւիթ Եպիսկոպոս Ղզիաձորայ՝ առիթ ինքեան գտեալ զիս ուսուցութեան հասակի նորոգ Հայրապետին, որ արդէն փայլէր իմաստութեամբ և զառաքինութեամբ ծերոցն անցեալ, ապրստամբեալ ի Հայրապետական իշխանութենէ և խռովութիւն յարուցեալ յազգին, ձեռնադրի կաթուղիկոս ի հինգ ե-

պիսկոպոսաց ի Զորոյ վանս և հայրապետանայ յԱղթամար, վասն ապացուցանելոյ ի մէջ առեալ՝ զդէպ երկմտին վասնայ և այլոց Հայրապետաց ի վաղուց ժամանակաց, զնեղան սրբոյն Գրիգորի, զԻօղ նորա, զգաւազան, զլծակ մաշկիզէն և զնորին զԱջ սուրբ, և որ մեծն է՝ աթոռ լինել վասպուրականի, ասէ, թագաւորացն Երջրունեաց։

Ընդ այս ապստամբութիւն Դաւթի և ինքնակոչ եղանել ի գահ Հայրապետութեան, գումարէ Գրիգոր կաթուղիկոս զբազմութիւն եպիսկոպոսաց, վարդապետաց, և վանահարց և միանձանց մինչեւ ցերկու հազար հինգ հարիւր անձինս, և առնէ Իօղով ի մեաս լեառն. յորում առաջի արարեալ զապստամբութիւն Դաւթի, ամենեքին ձեռադրով բանադրանս և զնզովս եդեալ ի վերայ նորին իսկ Դաւթի և որոց յաստիճան կաթուղիկոսութեան բանութեամբ կամ կաշառօք եղանիցեն, մերժեցին միանդամայն զնա, և վասն այսորիկ զրեցին առ եպիսկոպոսունս և իշխանս յ սրևելս Հայաստանի և առ նոսա, որք ընկալեալ էին զԴաւթի. ոորոց առ այս մերժեալ զնա, դարձան յօրինաւոր Հայրապետն և օրհնեցան ինձանէ. իսկ Դաւթի միայնոսաւ յԱղթամար. յորմէ և յետ քանի ամաց զԱջ և զքօղ և զգաւազան Լուսաւորչին գողացեալ ոմանց՝ ածեն առ Գրիգոր։

Յայս ժողով, ասէ Հայր Միքայէլ Չամչեան, թուի թէ սահմանեցաւ այն կանոն, զի ընտրութիւն կաթուղիկոսաց՝ լիցի համաձայնութեամբ չորից գլխաւոր աթոռոց Երքեպիսկոպոսաց ի մեծն Հայս, որք են Իջմոյ, Հաղբատայ, Թադէոսի Առաքելոյ վանաց և Տաթեւու։

Գ.Լ. ԼԳ.

Ընաջլեն Իօղով է Հռոմկլայ, ուր ընդ ընդեցաւ Նեբրէս Շնորհալի է կաթողիկոս։

(Ամք Տեառն 1165)։ – Հասեալ Գրիգոր կաթուղիկոսի ի վերջին շունչ ծերութեանն և ազդեցութեամբ Հոգւոյն իմացեալ զվաղճան կենաց, արար Իօղով եպիսկոպոսաց և վարդապետաց ի Հայրապետանոց անդր ի Հռոմկլայ, ի նոյն նահանգէ. ուր յետ յանդիման խօսելոյ յորդորական բանից, հաւանութեամբ ամենեցուն ընտրեաց փոխանակ իւր յաթոռ Հայրապետութեան զՀալատատ եղբայրն իւր զՆերսէս Շնորհալի. որում բազում անգամ յառաջարկել նորա, չէր լեալ յանձնառու. որ և յեպիսկոպոսութենէ իւրմէ և ցայն վայր էր նա ինքն շրջնորհալի հաւասարակից իւր գործակալ եղբօր իւրում հոգւով չափ աքնեալ ի յառաջադիմութիւն ազգին և յանքուն հսկողութիւն ի վերայ բանաւոր հօտին Քրիստոսի, յանձն եղեալոյն ի Հայրապետական տեսչութիւնն։

Այլ այսմիկ ընտրութեան թէ և զանձն իւր ոչ արժանի մատուցանէր սուրբն Շնորհալի, յառանձնութեան պարապել կամելով, սակայն Իօղովն ամենայն ստիպեալ զնա ընդունել զառաքելական զայն պաշտօն ի կոչմանէ Հոգւոյն, որում ամենեքին ակն ունէին, ապա նա ինքն Գրիգոր կաթուղիկոս հօծ զնա, զգեցուցեալ նմա զգեստ Հայրապետական կարգի, և զքօղ կաթուղիկոսական ի

պուխն նորա արկեալ, կոչեաց զնա ՅԱ-թոռ իւր, և զգաւազան հայրապետական իշխանութեանն եդ ի ձեռս նորա՝ երկիր պահել նմա իբրև կաթուղիկոսի. ուր ապա բացեալ զհոգեբուղխ բերան իւր Հ՚նորհալին՝ ներբեխ խօսեցաւ զիմաստա-լից իւր առնաբանութիւն յիւրում յայնմիկ ձեռնադրութիւն, որպէս կայ ՅԱ՚նդհանրական թուղթս նորա։

ԳԼ. ԼԴ.

Ներբողք և երգք ծողովոյ ի Հռովմ-այ վասն գործոց ընդ Յոյնս։

(Ամք Տեառն 1167—1178)։— Ծողովս մեր զերկարաձիգ անցս պատմութեան յաղագս միաւորութեան ներկղեցւոյ մերոյ ընդ Յունաց և յաղագս երկուց ազգացս միաբանութեան, յորոց վերայ այնքան բանակցութիւնք եղեն յերկուց ևս կողմանց յաւուրս Կիւս Մանուելի կայսերս և երից կաթուղիկոսացն մերոյ Գրիգորի Պալհաւունւոյ, Հ՚նորհալւոյն Ներսիսի և եղբօրորդւոյ նորին Գրիգորի Տղայ կոչեցելոյ յամս Տեառն 1167—1180, և զնոցին փոխադարձ թղթակցութիւնն զգաւանութեանց հաւատոյ և կարգաց ներկղեցւոյ, որ ՅԱ՚նդհանրական Հ՚նորհալւոյն, ասացին համառօտ կարգիւք ներկորդ և երրորդ ծողովոյ պատմութիւնս ներկղեցւոյս մերոյ եղեալ ի Հայրապետական Աթոռ անդր ի Հռովմկայ։

Տեսեալ Մանուելի կայսեր զթուղթ Հ՚նորհալւոյն Ներսիսի զգաւաջինն յաղագս գաւանութեան հաւատոյ և կարգաց ներկղեցւոյ մերոյ ի ձեռս փեսային իւրոյ դքսին Ալէքսի, ըստ խնդրանաց նորին ի Մամեսաիա քաղաքի՝ գրեալս ի նորին Հ՚նորհալւոյ ՅՆախկոպոսութեան իւրում՝ և թարգմանեալ զայն, ընթերցան ինքնին կայսրն և պատրիարգ նոցին Մ՚ևքայել, և հասու եղեալ ուղղափառութեան հաւատոյս մերոյ գաւանութեան ՅԱմենասուրբ Երրորդութիւնն, ի մարդեղութիւն Քրիստոսի, և աւանդութեանց կարգաց և ծիսից, վառեցան ի սէր միաբանութեան և ի տեսութիւն իսկ նորին Հ՚նորհալւոյ. ուստի և անդ զառաջինն գրեաց թուղթ կայսրն առ Գրիգոր կաթուղիկոս եղբայր Հ՚նորհալւոյն յաղագս միաբանութեան և առաքելոյ վեղբայրն ի Պոստանդնուպօլիս՝ բանիւ բերանոյ ևս խօսել ի վերայ գրելոցն նորա, զի բարձցի ի միջոյ պատճառ բաժանման երկուց ներկղեցեաց. և զայս թուղթ առաքէ ի Հռովմկայ դեսպանութեամբ ուժեմն Հայազդւոյ ծառայի իւրոյ Սմբատայ։

Բայց սորա ընդ ժամանել ի Հռովմկայ, վախճանեալ գոլով Գրիգոր կաթուղիկոսին, ընդունի զթուղթ կայսեր յաջորդ նորա Հ՚նորհալին Ներսէս. և պատասխանի արարեալ նմին, գրեաց և զընդարձակ նամակ գաւանութեան հաւատոյ և կարգաց ներկղեցւոյ ըստ խնդրանաց դեսպանին յառաւել ևս տեղեկութիւն Յունաց՝ գաւանութեան մերոյս հաւատոյ։

Զայս թուղթ Հ՚նորհալի Հայրապետին ընկալեալ կայսեր և ներկղեցական դասուց Յունաց, թողեալ զհին հակառակութիւն, վասնզի ի միաբանութեան. ընդ որ կայսրն առաքեաց ի կողմանէ իւրմէ առ կաթուղիկոսն մեր զԵւթիմիանէ

ուսուածոյն և զՅովհաննէս ուխտն խօսիլ ընդ նմա ի վերայ բանից հաւատոյ հանդերձ երկրորդ թղթով ի 1170 ամի, յորում ցուցանէր զուրախութիւն իւր ընդ յօժարութիւն կաթուղիկոսին սակս միաւորութեան Եկեղեցւոյ և ուղղափառ հաւատոյ։

Ընդառաջ յառաջարկել Թէոբիանեայ զաշակերտութիւնս Յունաց ի վերայ խնդրոյ ինչ, պատասխանէր Հայրապետն ըստ վարդապետութեան Հայսմաւուրկոյն ցըս Եկեղեցւոյ, նախ՝ ի վերայ երկուց բնութեանց Քրիստոսի. երկրորդ՝ յաղագս Տօնի Ծննդեան Քրիստոսի. երրորդ՝ ի վերայ երից արքեպսկոպոսաց. չորրորդ՝ յաղագս մեռոնի. հինգերորդ՝ յաղագս աղօթելոյ Եկեղեցւոջ. և վեցերորդ՝ յաղագս ժողովոյն Քաղկեդոնի։

Ո՞ւրեմն այսոցիկ խնդրոցս պատասխանի ընդհարձակ Հայրապետին, զորոց և յառաջին թուղթն իւր գրեալ էր բացայայտ, արձանագրեալ Թէոբիանեայ՝ ըստ վկայելոյ Լամբրոնացւոյն ի Ներսէսեան Շնորհալւոյն, գարձաւ ի Կոստանդնուպոլիս՝ հանդերձ նամակաւ սուրբ Հայրապետին. ընդ որ Յոյնք առաջի արարին խնդիրս զնաւակարգութեամբք վերբսոն ընդ յիշեալ Ասուածաբանին՝ հանդերձ կայսերական թղթով՝ յամին 1172 — ընդունել մերումս Հայրապետի Եկեղեցական Ժողովով։

Եւ այսքիկ էին գլուխք ի խնդրոցն, զորս յառաջ բերեմք ի Համէնանէ։

ա. Նղովել զմի բնութիւն ի Քրիստոս ասողն՝ զԵւտիքէս և զԴիոսկորոս, և զՍեւերիոս, զՏիմոթէոս զկուզն և զամենայն հաւանողս նոցունց։

բ. Խոստովանել զՏէր մեր Յիսուս Քրիստոս՝ մի որդի, մի դէմք, մի անձնաւորութիւն անորիշ, անփոփոխ, անայլայլելի, անշփոթ՝ ոչ այլ զորդին Ասուածոյ ասել, և ոչ այլ զորդին սրբոյ Ասուածածնի, այլ և զնոյն՝ որդի Ասուածոյ և սրբի մարդոյ՝ զմին (զՔրիստոս) խոստովանել Ասուած և մարդ յերկուս բնութիւնս. զնոյն զմի Քրիստոս՝ ունելով երկուս ներգործութիւնս և երկուս կամս Ասուածային և մարդկային ոչ հակառակք միմեանց, այլ ընթանալ մարդկային կամքն զկնի Ասուծոյ կամացն։

գ. Ասել զերեքսրբասացութիւնն բաց ի խաչեցելոյն վասն մեզ և բաց յԱյն։

դ. Տօնել և զտօնսն ընդ Հռոմս, այս է, զԸնտեռաց Տեառն ի ԻԵ Մարտի, և զՆուէնդն ի Դեկտեմբերի ԻԵ. զԲեթլեհեմն յուրբաթորդն զկնի Ծննդեանն Քրիստոսի, այս է՝ յառաջինն Յունուարի և զմկրտութիւնն ի վեցն Յունուարի, և զՏեառնընդառաջն ի փետրուարի Ը. և պարզաբար զամենայն տօնսն տէրունականս և զսրբոցն Ասուածածնին, և և զԱրտաշէսին և զսրբոց Առաքելոցն և զայլոցն։

ե. Առնել զմիւռոնն ձիթով ի պաղոյ ծառոց։

զ. Ջատուածային հաղորդութիւնն առնել խմորոն հացիւ, զինեաւ և ջրով։

է. Ամենայն քրիստոնէայքն, քահանայք և ժողովրդականք ի ներքս յեկեղեցիսն կացցեն, յորժամ կատարի ասուածային պատարագն, բաց յայնցանէ՝ զորս արգելուն կանոնք յաղագս ապաշ-

խարութեան, նոյնպէս և յայլ կարգս Եկեղեցւոյ։

Ը. Ընդունել զՏրրորդ, զՀինդեր, զվեց. և զեօթնևրորդ գոհիզերական ժողովն։

Ը. Ընդունել զառաջարկութիւն Կաթողիկոսին միայն ի թագաւորէն Հռոմոց։

Ընդ այս խնդիր Յունաց գրեալ Ներսիսի Թուղթս առ ամենայն Եպիսկոպոսս և վարդապետս մեծին Հայոց ՅԱշխարհ Երաբատեան, յորս կային Եպիսկոպոսք աւելի քան երիք հարիւրք և յոլով վարդապետք, ծանոյց նոցա զամենայն անցս միաբանութեանն. առանց որոց դժուարին էր ընդունել զխնդիրսն. և մինչ պատրաստ էր հրաւիրել զնոսին հասանել անդր առնել ԺՀողով ընդհանուր, զի մի՛ ծագեսցի երկպառակութիւն ՅԱզգին, հասեալ նմա վախճան կենաց, փոխեցաւ ինքն Շնորհալին առ Աստուած, և ոչ գումարեցաւ ժողովն։

Իսկ երրորդ ԺՀողովն ևս անդ ի Հռովմկլայ՝ որ եղև ընդ ձեռն եղբօրորդւոյ Շնորհալւոյն Գրիգոր Տղայի, որ յաջորդեաց յետ նորա ՅԱթոռն, այն ևս այսպիսւոմ դիպաւ վիճակի, և ինաց անկատար, —որպէս արդ ի համառօտագրութեանս։

Այս ինքն Գրիգոր Կաթուղիկոս հաւատի դիտելով, եթէ ոչ ունի ընդունել երեք Ազգ մեր զիսոխութիւն ծխիցն ամիսոխելոց յինն խնդիրս անդ Յունաց, խորհրդով վարդապետաց իւրոց խնդրեաց գրով ի կայսերէ մի՛ պահանջել զայնս ի Հայոց, այլ միայն՝ զորս ի հաւատս վերաբերին. զի հնացեալ սովորութիւն է՝ ասէ՝ Ազգիս, զոր միայն ի ձեռն խաղաղութեան ընդհանուր ԺՀողովոյ՝ սէրն կատարեսցէ, ասէ։

Ապա իբրև ընկալաւ Գրիգոր Կաթուղիկոս զպատասխանի կայսերն և ԺՀողովոյ մեծապօլատացն Յունաց, որոց թողեալ զինն խնդիրսն զայնոսիկ, խնդրեին ի Հայոց միայն բանս հաւատոյ ի նիւթ միաբանութեան, արար զԺՀողովն երրորդ ի Հռովմկլայ յամի 1179. յորում գտան երեսուն երիք Եպիսկոպոսք միայն, ընդ որս էր և Կաթուղիկոսն Ղուանից, վարդապետք, քահանայք, վանահայրք և իշխանք. իսկ երեք հարիւր երեսուն և վեց Եպիսկոպոսք արևելեան Հայոց արգելեալք ի շփոթութենէ ճանապարհայ, ըղթուղթ հաւանութեան միայն առաքեն ի ԺՀողովն, որպէս և այլք ոմանք մերժեցին զհրաւէր Կաթուղիկոսին։

Ի ԺՀողովն յայսմիկ՝ ուր ընթերցաւ Լամբրոնացին Ներսէս զառենաբանութիւն իւր, ընթերցան և զթուղթս ԺՀողովոյն Յունաց և կայսերն, և համաձայն գտեալ զայնս դաւանութեան հաւատոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ, ստորագրեցին ամենեքեան. և վերստին գրեալ ԺՀողովով զգիր դաւանութեան հաւատոյ, առաքեցին ի Կոստանդնուպօլիս. բայց հրեշտակք Հայրապետին հասեալ ի Կեսարիա, և արգելեալք ի խռովութեանց ճանապարհի, դարձան յետս առ Կաթուղիկոսն հանդերձ թղթովք ԺՀողովոյն. և յայսմիկ միջոցի վախճանեցաւ և կայսրն Մանուէլ յամի 1180, և ինաց անկատար միութիւն երկուց ազգաց Եկեղեցւոց, որով և ապարդիւն եղև հնգետասան ամաց ջանք և աշխատութիւնք։

(Շարունակելի)

ԱԲԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱՆՑԵԱԼՆ.

(Շարունակութիւն):

Ընդարձակ Հայաստանեայց Եկեղեցւոյ անցելոյն մէջ փառաւոր արդիւնքը արժանաւոր և նուիրական անուն և յիշատակ արձանած է Մեծն Ներսէս, որոյ Հայրապետական իշխանութիւն պարտաւորեալ և կարի ծանրաբեռնուած էր կրկին վեմ պաշտօնով՝ այս ինքն ա, Եկեղեցւոյ բարեկարգութեան և բ, Ազգի փրկութեան նուիրական զբաղմունքով։

Նորին ազգասէր՝ հոգեվառ և եռանդուն սրտի և զգացմանց առջև ամէն կերպ դժուարութիւնք կարծես առ ոչինչս զբուած էին՝ ուշ գնելով և ճիգ թափելով միայն իւր նպատակները պսակել յօգուտ Ազգի և Եկեղեցւոյ։

Ի յին ժամանակուայ թագաւորական տան վատթար՝ տապանեալ և կորստարեր ընթացքի ապրիւնաւորած ազէտք՝ խռչընդոտք և խուովայոյզ ներգործութիւնք առաւել կնճռոտած էին Եկեղեցւոյ և Ազգի վիճակը։

Ասոյց և այնպէս Մեծն Ներսէս Երանելին նախ քան զամենայն ձեռնարկեց Եկեղեցւոյ բարեկարգութեան, ըստ որում ինչ ինչ խանգարմունք և շփոթութիւնք տպրտել սկսած էին եկեղեցւոյ բարեկարգութենէն մէջ, զորս առաւելութեամբ ինն յուզմութիւն փոխադրեց՝ ինչպէս որ կգրէ Խորենացին՝ (Գիրք Բ. գլ. Ի) ‘‘զամենայն կարգս ուղղութեանց Հայոցն իւրոց նորոգեաց, այլ և առաւել ևս,,։

Ազգային յոռղով գումարեց Հնախառաքեաց մէջ եղած մի քանի ժողովներ քը կանոնագրութեամբ արդիւնց, և բազմայական և առաքինասէր գերեցիկ նպատակներով բաղում կարգի և աստիճանի թշնամս և առաւպատ անձանց համար ազատանարաններ և խնամատուներ շինել սահմանեց և գործադրեց՝ ազատով հասոյթներ յատկացնելով և կարևոր հրահանգ և կանոններ սահմանադրելով, որոց վերայ յատուկ վերակացուներ էն կարգեց՝ որպէս զի միշտ հոգ և խնամ տանին և յատահատ կամ յակամայից բռնադատեալ չարութեանց առաջքը առնուին։

Երկու հազարէն աւելի եղբայրանոցներ և վանքեր (կամ՝ պալոցներ) յաւելացուց և հաստատեց, և պատպետպակոնեան և կլնոնեան զարգացման և ընդհանրացման խորին ուշադրութիւն առաւ և անխոնջ հետամուտ հանդիսացաւ։ Որով կանխաւ հիմնուածներն և նորոգ հաստատուածներն բարեկարգելով և արդիւնաւորելով հանդերձ՝ ժառանգաւորաց կրթութիւնը միակ գարման գտաւ Հայրենեաց և Ազգի փրկութիւնը և յարատև ապահովութիւնը նուիրագործելոյ համար։

Մինչ այսպիսի ջանիւք կշահատակէր Մեծն Ներսէս, միանգամայն թագաւորական տան և նախարարաց մէջ սիրած երկպառակութիւնը անհետացնել կաշխատէր հաշտասէր և խաղաղարար միջոցներով, — որպէս զի ազգային միութիւնը և զօրութիւնը չվտանգուի ի վնաս և ի կործանումն Հայրենեաց, — կսկսին արտաքին յարձակումներ, որք յունական և պարսկական ազգեցութեանց անընդհատ արդիւնքներն էին, զորս թագաւորական տան անխոհեմ և անհեռատես շարժմունքներն կթեթևցրէին և կըզլպտէին, ուստի մեր

կիսեթայ ընդառաջել թշնամւոյն իպաշտպանութիւն ։ այրենեաց և ցասուցեալ սրտի զայրոյթը զիջուցանելոյ, եւ լրիւն կրկին ի պօղոս մօտալուտ վտանգէն և կործանմանէն զՆզդ և զՆկեղեցին ազատելոյ համար՝ միջնորդելոյ, թողութ՝ որ այսպիսի առիթներով օտար երկրի մէջ օտար իշխանութիւնէն անապատ տեղ կաթսորեր, ի վիշաս և ի բանաս կնատնուէր, անտանելի տանջանաց և նախատանաց կենթարկուէր, և այս ամենը սիրով կրտաներ Նզդի և Նկեղեցւոյ օգտի և փրկութեան համար։

Երբ ժամանակ եղաւ՝ որ իւր որդիք օտարաց ապաստանելով՝ ։ այ թագաւորական տան ձեռքէն ազատուելոյ հնարքներ կորոնէին և օտար թագաւոր գտանել կջանային, Մեծն Ներսէս կզդար անխոհեմ ընթացից առաւել վտանգաւոր և չարագուշակ հետևանքները, Նզդի փրկութիւնը՝ Նզդի միաբան գործողութեանց և հայրենի թագաւորին հնազանդ կալով՝ ձեռք բերել և օտարէն ըզգուշանալ կնորատէր՝ այս նշանաւոր խօսքերը ևս ասանդելով՝ ,,եթէ բիւր չար ևցէ Նշխակ թագաւոր ։ այոց, սակայն Նստուածապաշտ է, և եթէ մեղաւոր ևս ևցէ, սակայն թագաւոր ձեր է,,։ (Ռուզ։ գլխ։ Դ։ գլ։ ԺՆ)։

Նյս հատառօտ նկարագրութենէ պիտի է իմանալ Մեծին Ներսիսի կրած տառապանքներ և սրտի վշտեր, նա և թէ ճշդիւս վշտակոծ կհառաչէր՝ երբ ի պօղոս կլսէր իւր ժողովրդեան մէջ սերմանուած եղբարասպան խռովութիւնքը, Մեհրուժանի չանքերը Պրիստոնեայ թիւնը չընդունելոյ և Նկեղեցին կործանելոյ համար, և թէ ինչ հնարներ կըզտանէր և Թէոդոսի օգնութեամբ և բարերարութեամբ զՆզդ և զՆկեղեցին կիրկին, թագաւորութիւնը կվերահաստատէր, զրոս երկարապատում կհատորդուին մեր պատմիչք։

Թէոդոս սոցա փոխարէն էր և ի լրումն առատապանաց՝ զի բարերարած և պաշտպանած պապէն մահատու թոյնով ևս ազգօգուտ կնաց թելը ընդհատեցաւ, թէպէտ իւր չանքերն և աշխատութիւնք բաւականին պսակուած էին, որոց դէմ ոչ ինչ թոյն ներգործել կըյաջողէր։

Երանելւոյն դրած և յարտարած բազում կարգ և կանոն և ուղղութիւնք գրեթէ յարատևեցին մինչև սուրբ Սահակ Պարթևի օրեր, թէպէտ քաղաքական յեղափոխութիւնք ևս անպակաս էին Նյաստանի մէջ, որք՝ ինչպէս միշտ բաւականին հարուածք կշռնեցին նաև Նկեղեցւոյ և Նզդի վերայ և հետզհետէ խանգարմունք և զրծմունք ներմուծանէին և սպրդեցին, բայց Նստուածապային ողորմութիւն միշտ Նկեղեցւոյ պաշտպան և օգնական լինելով՝ կմխիթարէր իւր սիրելի ժողովուրդը երբեմն հզօր և արժանաւոր Նյրապետ և Նռաջնորդներ պարգևելով, որք բազում չարեաց և վտանգներու առաջքը առնուլ՝ նա և միշտ ուղղութիւնք և բարեկարգութիւնք կյառնելուին, և հանապազ ժողովրդեան դաստիարակութեան և կրթութեան, ինչպէս նաև բարոյութեան համար անխոնջ ջանալիր կլինէին և կը հետևէին նուանդաւատ ճշմարիտ։

Գրեթէ արտաքուստ հալածմունք և վտանգաբեր ազդեցութիւնք՝ իսկ ի ներքուստ երկպառակութիւնք առաւել գա-

աբն կատարեալ էր ի վիշտս և յաւելուած՝ երբ վ. երին Նախանձաւորքն հաճեցան շնորհել Հայոց Եկեղեցւոյ երկու հոգեպաշտպանիչ և Ընտրեալներ, որոց առաջինն էր Ս. Սահակ Պարթև կաթուղիկոս, և երկրորդն՝ Ս. Մեսրովբ Եղանելին։

Ոգւով ջանիւք պարգևեցաւ Հայոց մի ոսկեգիր, յորում տեսր ՍԱՀԱԿ և ՄԵՍՐՈՊ ծաղկեցան, և այս էր ի հինգերորդ դար։

(Շարունակելի)

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

«ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ ԱԶԳԱՑԻՆ ՆԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԳՐԵԱԼ Ի ՄՍԵՐԱՑ Մ. ՉՄԵՒՌՆԱՑԻՈՑ։

Ամբողջ աւտարակը գրուած է երեսուն և հինգ յօդուածով, յորս կամփոփուի Եկեղեցական պատմութեան մանրամասնութիւնքը։ Վ. Հայսմաւուրքէ կոպիտ ինձ յանձնեալ լինելով զննել այն աւտարակը, ըստ որում կրօնական գիրք՝ որ ապահովէին յառաջ հոգեւոր Իշխանութեան պիտի ներկայացուէր, ուրկից նշմարուած պատմութեան ընդդէմ կարծիքը ամէն ինչանահինք։

Բանաւէճերորդ յօդուածի մէջ կգրէ։ «Հայոց եկեղեցին կամելով յայտնել Քրիստոսի Յարութեան հաւատոյ ուրախութիւնը, կանոն դրած է, որ այն օրը (Քրիստոսի Յարութեան կիրակի օրը ի զատկին) Պահանայք և գիրք եկեղեցւոյն պիտակ զգեստներով զարդարուին»։

Այս կանոնը ոչ դրուած է՝ չինք գիտեր. վասն զի Հայոց եկեղեցական կանոնների մէջ չինք գտնել, թէ և հեղինակը կգրէ թէ Հայոց եկեղեցին կանոն դրած է։

Իսկ Հայոց Եկեղեցին յօրինակ հրեշտակի ի հանդերձս սպիտակս երեւելոյն Քրիստոսի գերեզմանում, արդարեւ սպիտակ զգեստ գործ կդնէ, չէ թէ բոլոր Քահանայք ու գիրքը, այլ միայն Եւաթարան կարդացողը և սարկաւագն և մոմ բռնող գիրքը, և այն՝ ոչ միայն զատկի օր, այլ և ամեն Յարութեան կիրակի օրերը, Եւաթարներից աւետարան կարդալու ժամանակ։ Եթէ կայ այնպիսի եկեղեցի մի, որ զատկի կիրակի օրը քահանայք և գիրքը եկեղեցումը սպիտակ զգեստներով կզարդարուին, այս եկամուտ է, գուցէ ուրիշ ազգերից առած։ Եթէ արժանայիշատակ Հեղինակի այս եկեղեցական պատմութիւնը տպագրող նորա որդին՝ Հայոց եկեղեցւոյ գրած կանոնը ցոյց կտայ, մենք նախընթացաբար խոստանում ենք, որ այս մեր նշմարածը՝ կանոնին համաձայնացնենք։

Երեսուն և չորսերորդ յօդուածի մէջ՝ Հայոց ազգային եկեղեցական ծոռդմունքը քառասուն և օրէն միայն է թուել. սորա համար էլ կարծ ասենք։ Հեղինակը արդիօք իւր ընդունածը միայն կթուէ՝ եթէ Հայոց եկեղեցւոյն արած ժողովն ու ընդունածը։ եթէ իւր ընդունածն է, պէտք էր մի առ մի թուել քառասուն և օրէն ծոռդմունքն էլ, որ կարդացողը իմանար թէ հեղինակը Հայոց Եկեղեցւոյ որ ծոռդմունքն է ընդունել, և որը մերժել։ Հայոց եկեղեցին իսրբոյն Կրիգորէ և ցՅո-

որդ հարկադրի կաթուղիկոս Ազգիս վաթսան և մի ազգային եկեղեցական ժողովք և գումարել։ — միթէ հեղինակի ընդունածը միայն սիւոի հոմարի օրինաւոր ժողով ։ — Ճշմարիտ է որ ազգը գումարուելով թէ շատ՝ թէ սակաւ՝ Եկեղեցական ժողով է կազմել, և Եկեղեցական ժողովքով ընդունել է կամ հերքել մի կրօնական խնդիր. ընտրել է կամ մերժել Հայրապետութեան մի յաջորդ թէ վեճմամբ, տարաձայնութեամբ, թէ խաղաղութեամբ ու սիրով. ժողովը ժողով է դարձեալ՝ Ազգային և Եկեղեցական։

Ուստի Հեղինակը՝ որ Փիլիպպոս Կաթուղիկոսի նախագահութեամբ եղած ժողովքէն եաքը յորդորեցաւէմ, ,, մինչև մեր օրերը, կերեւի թէ, այլ օրինաւոր եկեղեցական ժողով չէ գումարուած մեր ազգին մէջ,, ։ Մենք էլ կասենք որ՝ իւր այս գրածը օրինաւոր չէ մեր ազգին համար, թողուվ որ ընթերցողք չեա Փիլիպպոս Կաթուղիկոսի եղած ժողովներէն օրինաւորութիւնը կարդան չեա այսօրիկ Հայաստանեայց Եկեղեցւոյ ժողովոյ պատմութեանը մէջ, որ առանձին գրքով ևս կտպուի՝ Երարատի մէջ հրատարակուածին զուգընթաց։

Մենք հանգուցեալ արժանայիշատակ Մեսր Մեսրեանցի քանքարը ճանաչելով, որ այս տետրակի հեղինակն է, կըսարակուսինք նորա գրչէն ելնելուն այսպիսի կէտեր, որ քան վեց աւելի նշմարած կը լինէր այդ յօդուածը, հետևաբար և կալծիք կտանինք եթէ փոփոխութիւն կրած լինին. այս կարծիքն էլ կ՚յուսանք որ կը փարատի տետրակի հրատարակող՝ Հրինակի որդին՝ որ խնդրած է թղթակցել թիւն վաճառելոյ տետրակին ի Հոգևոր Հշխանութենէ։

ԱԲԵԼ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի ՎԵՐԱՑ ՏԷՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆ Ի

ՆԱԽԿԻՆ ՀԱՅՈՑ.

(Շարունակութիւն.)

Մաան Էլէքտը.

Ը։ — Հայաստանի ամենահին կրօնն էր՝ բնութիւնը, արեգակը և լուսինը պաշտել Ըրամազդ, որ ըստ գրականութեան ասել է առնացի չաստուած կամ թէ մարդկանց չաստուած, նոցա ամենակարող չաստուածութիւնն էր, և նորան համարումին ինչպես նախապատճառ մարդկային ցեղի, և կամ թէ հայր ամենայն դիւցազանց, Նորան անուանումին նա և Ճարտարապետ արարիչ երկնի և երկրի Հինել էին ի պատիւ նորա տաճարներ, խորաններ, արձաններ Ըրմաւիր, Անի, Նագուան և այլ քաղաքներում *)։ Մի ուրիշ չաստուածութիւն կոչեցեալ Միհր՝ այս ինքն միակ հուր, համարուած էր ինչպես որպէս Ըրամազդ։ Նա էր նշանակ Տիեզերական կամ թէ կենարար հոգի։ Նա էր որ առաջնորդումէր քաջերին ի պատերազմ, և տահմանումէր պատերազմական ձևնարկութեանց ելքն ի նպաստ քաջերու։

(*) Ձեռագիր հայ. Թղթաբուրաստան — Մովսէս Խոր. Գիրք 1. գլուխ Ն. Գիրք Բ. գլ. 50։

Այլ և նորա անուամբ էին արարած-
բում ամենահռչակաւոր երդումն և հաս-
տատումն բարեկամութեան կամ խաղա-
պատութեան դաշնադրութիւնքն. Երմուի-
բում, Ռագաւիզում և Հայաստանի ու-
րիշ քաղաքներում նա ունէր տաճարներ *): Այդ չաստուածոց ամենահռչակաւոր տաճարը՝ ուր տեսանելի էին Միհրիական եօթը անձաւքն քանդակուած մի քարի վրայ, փայտակարանի պատուհանն էլ հոմանուն նահանգում **): Երբեմն որ՝ առաջին տաճարը որ շինեցին Հայաստանում՝ ի պատիւ չաստուածոյ ընծայեցաւ այդ աստուածութեան, որով հետև տաճար բառը՝ որ հայերէն է՝ միհան, ածանցուած է միհր բառից: Նրա քանդիւր տարին միանգամ կատարում էին մի շատ հռչակաւոր ուխտ ի պատիւ այդ չաստուածոյ. գարունքի սկիզբումն էր լինում որ անուանին նաւրիական հուր, վառելով մի խարոյկ մի հրապարակի վրայ, և հայցելով երկնից օրհնութիւնն: Մի լապտեր վառուած այդ կրակից պահվում էր ամեն տաճարներու մէջ ամբողջ տարին: Այս սովորութիւնն՝ որ անյիշատակ ժամանակից է առել և առ բազում հին ժողովուրդս, և այսօր էլ գործադրվում այժմեան Հայրի մէջ: Այդ լինում Տեառնդառաջի ***) օրը կամ թէ նորա նախընթաց գիշերը:

(*) Շեռապիր. Խոր. Հաւելեան հատ. Ա. էջ 389:

(**) Մովսէս Խ. էջ 360: Ծ. Հ.

(***) Անահիտ է այս, և երբեմն Արտաշատի մէջ հիւրընկալուած է սորա համար:

Ս. Խր.

Ր:—Այս արարողութիւնը հատարտ կօրէն անուանի մի բանականին ընդարձակ անդամ առընթեր եկեղեցւոյն: Նթէ պատահի որ այդ օրը եղանակը խառնակ լինի, և չկարողանան կատարել բաց օդի տակ, այն ժամանակ կատարուհն եկեղեցւոյ գաւթում, այրելով միայն մի քանի այրողական հրանիւթեր մի մեծ պղնձէ ամանի մէջ, և պահելով միշտ սովորութեան մի և նոյն ձեւերն: Այն այրելի նիւթերն՝ որ պիտի էականապէս կազմեն այդ նուիրական հրոյ խարոյկն, են ուռի և ձիթենւոյ ճիւղեր և ամեն տեսակ ծաղիկներ՝ որ կարելի է գտանել այդ եղանակում, մի փոքր և չոր ցօղուն, մի բուռ խունկ, և այլքան ևս ոչխարի բուրդ: Այն անձինք՝ որ իրաւունք ունին վառելու այդ հրաւոր, ընդհանրապէս երիտասարդ անձինք են, որ նոր են ամուսնացած լինում տասուչ ընթացքում: Երարողութիւնն միշտ տեղի է ունենում մի տեսակ հոգեւոր հանդիսով. երկրի եպիսկոպոսն կամ իւր փոխանորդն կղերակաների, երիտասարդ ամուսնացածների և ժողովրդական ընկերակցութեամբ գնում են թափորով խարոյկի տեղն, բոլորելեան ունին ի ձեռ ին մի մոմ՝ որ պետ վառուած չէ: Երբ հասանում են այն տեղ, կղերականք սկսում են ասել մի քանի աղօթք՝ որ համեմատութիւն ունենան այդ բանին, յետոյ վառում են երիտասարդ ամուսնացածների մոմը, պատառելով հօրն երկնաւորի, և վերսին աղօթելով, յետոյ նրանց հրամայում են վառել խարոյկն ի միասին, և հաղորդել մերձակայից: Նրիտասարդ անձինքն կրակը դնելուց յետոյ ամենայն կողմից վառում են յաջորդապէս բոլոր հանդիսականաց մոմերն. կղերականք

և ժողովուրդն այն ժամանակ սկսումեն երգել ուրիշ աղօթք՝ մինչ այն ժամանակ՝ որ բոլոր նիւթին մնախանուամբ, վերջապէս նոքա տալիս են իւրեանց օրհնութիւնն և յետ են դառնում։ Երարողութիւնը վերջանալուն պէս ժողովուրդը ամենայն ոյժով մօտիկանալու խարոյկի տեղից, որ ժողովի մի քանի խանձող, կամ թէ մի քիչ մոխիր՝ որ պահումէին իւրեանց տներումն մի տեսակ պատկառանօք և մեծարանօք։

Գ։—Ե՞տ անհնարին է կարծել որ Մհերի պաշտօնը, կամ թէ սիրելական հուրը, ի բնէ հայատարած էր Հայաստան առաջ քան թէ Աստրացոց և Պարսից մօտ, որովհետև հուր անունն՝ որով նոքա Աստրացիք պաշտումէին դվեալ կրակը, կամ թէ կենդանարար նիւթոց սկզբնապատճառը, է հայերէն բառ կամ արմատ՝ որից ծագումեն բազմաթիւ բարդացեալ կամ ածանցեալ բառեր այդ լեզուի մէջ, և մի և նոյն ժամանակ է չորս տարերց միևի անունն և նշանակումէ սիրելական հուր, կամ թէ գվեալ ծնող և պաշտպան կենդանի էակներին։ Ե՞տ ունին այլ և մի ուրիշ բառ նշանակելու համար նիւթիղէն հուր, որ մեզ այրումէ կամ թէ որ մեզ կարող է վնասել, այդ է կրակ բառն, որ ըստ գրականութեան ասել է սպառիչ։ Մենք ունինք նա և այն թիւ յատուկ անուններ թէ տեղի և թէ մարդկանց՝ որ ձևացած են հայկական Մհեր բառից, որք են օրինակի համար՝ Մհերդատ, Մհերժան, Մհերան, Մհենեբսէհ, Մհերվնասպ և այլք՝ որանց կացած դարերում՝ Ե՞տ և Պարսիկք ի միասին դործ էին ածում։

Գ։—Ահ և այս երկու ժողովուրդներն պաշտումէին հուրը Մհեր անունամբ, սակայն մեծ զանազանութիւն կար նոցա մէջ։ Ասաջիններին նուիրական հուրն մի անեղեռնի հուր էր, և նորան ներկայացնումէին տալէին մի անգամ խարոյկի կերպարանքի տակ. բայց երկրորդներին հուրն նիւթիղէնէր՝ որ պաշտումէին և պահումէին միշտ անջնջելիապէս տաճարներումն, և նորա մասին Ե՞տերն նորանց կոչումէին կրակապաշտ՝ այս ինքն նիւթիղէն կամ թէ կրակ պաշտող։ Պարսիկներն համարումէին Օ՞օրօաստրին*), ինչպէս յաստուած և Օ՞էրմանի որդի**), և Ե՞տերն իմանումէին Օ՞օրօաստրին***)՝ մի մոդուական մարդ՝ որ եղծել էր իւրեանց կրօնը և ապականել էր Պարսիկներին։ Օ՞անազան ժամանակներում երբ Պարսիկներն ուղումէին նուաճել Ե՞տից դաւառներն, նոքա աշխատումէին գրաւել բնակիչներին սէրն, կրօնի յայտնի միաձևութեամբ նոցա յուշ ածելով՝ որ Մհեր մի և նոյն յաստուածն է՝ որին պաշտումէին հաւասարապէս Պարսիկներն որպէս և Ե՞տերն, ասելով թէ՝ այն զանազանութիւնը՝ որ կար երկու ժողովրդոց մօտ՝ աւելի Պարսիկների համար մի դրուատանք էր, որ նորան աւելի ջերմեռանդութեամբ պաշտումէին։ Երբ Երատաշէր Սասանեան մտաւ Ե՞տաստան երրորդ դարուայ միջումն, հրամայեց վառել անպատար նուիրական հուրն՝ բոլոր այս երկրի տաճարներումն. բայց այս հնարը վոխանակ շողոքորթելու՝

(*) Զուցէ Որմիզդին ակնարկէ։
(**) Զրուան։
(***) Զուցէ Զրադաշտն լինի։

ժողովուրդն ևս առաւել գազանից ընդդէմ Պարսից։ Հինգերորդ դարուն երբ Պարսիկներն ուզուէին հաստատել մոգութիւն Հայաստանումն, այս երկրի զօրապետի մէկը՝ կոչեցեալ Արշաւիր Նամատական՝ ասուէր Պարսից թագաւորին հրապարակաբար իւր հայրենակիցների կողմից, որ ոչ իրենք և ոչ էլ իւրեանց պատերը և նախնիքներն երբէք չեն ընդունել մոգութիւնն կամ կրակապաշտութիւնը Պարսից նման *)։

Ե։—Մի երրորդ հաստատուածութիւն՝ տարբեր Մհերից՝ էր արեգակն, Արև, Երեգ, Երեգակն՝ Արեգ կամ Արէս անուամբ. առաջինն ցուցանուէ մեզ լուսաւորող արևը, տեսանելի արեգակը, և նշանակուէ առաջին առնացի. երկրորդ բառն նշանակուէ ըստ դրականութեան արու կամ էգ և նշանակուէ Արևելք ընդհանուր արեգակ՝ կամ թէ անմահական արևն. երրորդը նշանակուէ աչք արեգակի կամ թէ արեգակի սիաւառակ. երկու վերջին բառերն նշանակուէին ուրիշ որակութիւնք՝ որ տալիս էին արեգակին, և նշանակուէ առնական կամարի, մարտ կամ յաղթող։ Հայոց ամիսների մինն նա և կրուէ Արեգ անուն։ Մեծ Հայաստանի նախկին աշխարհագրութեան մէջ, իւր նահանգաց մէկն շինուած Արաքսի հիւսիսային կողմում՝ կոչվուէր Աղէվանք, բառ՝ որ ասէր է կողմնակից արեգակի։

Այս բարերար աստղ պաշտուէն առաւել ընդհանրական էր և գուցէ առաջինն՝ որ հաստատուեցաւ ի Հայաստան աշխարհ։ Ընդունելով այն հալածանաց և բազմատեսակ փոփոխութեանց՝ մինչ այսօր ևս գտանվուէն այնպիսի Հայեր՝ որոնք պաշտուէին արեգակը և որ իւրեանց մէջ կոչվուէն—Արեւորդիք։ Հին ժամանակում տաճարներ, խորաններ էին շինել ի պատիւ նորան, և ամեն տեղ պաշտվուէր։ Եւ Հայերն ընդհանրապէս դաւանած են քրիստոնէութեան մէջ, սակայն արեգակ անունն նոցա մօտ առաւել գործ է ածվում՝ քան թէ ուրիշ քրիստոնեայ ժողովրդոց մօտ. իւրեանց ապօթքի գիրքերում և իւրեանց եկեղեցական երգերում, որպէս նշանակ առաւածային, կամ աշխարհի Փրկչի բառութեան՝ քաղաքական այն բոլոր տովրութեանց մէջ, ուր որ լինուէն կրօնական արարողութիւնք, արեգակը համարվում մի բան։ Եթէ մի հիւանդ մերձ է մեռանելու, շրջուէն նորա անկողինն դէպի արևելք, մի և նոյն բանն էլ անուէն երբ մեռնողն դնուէն դերեզմանի մէջ *)։ Մեռելների թաղելն ևս անուէն ցերեկով և երբէք չեն թաղում արեգակը մտանելուց յետոյ։ Ընդհանրապէս բոլոր եկեղեցիներն և խորաններն դէպի արևելք են շինուած։ Եթէ մէկը կամենում ապօթք անել եկեղեցուց դուրս, շրջուէ իւր դէմքը դէպի արևելք։

(Շարունակելի)

Թ. ՕՐ. ՍՕՖԻԱ ԱՌԱՔԵԼԵԱՆՑ

(*) Ղազար Փարպ. էջ 142։

(*) Ի Ս. գրոց ուսանելով (Մատ. ԻԴ, 27) դի Քրիստոս՝ յարևելից իրրև փայլակն պիտի գայ, ննջեցեալքն և թաղեալքն երես դէպ յարևելս կդնեն՝ և ոչ այլ նպատակաւ, և այս ընդհանուր մի օրինակ գեղեցիկ սովորութիւն է և ունի իւր օգուտները։ — Հայք արևուն այնպիսի կրօնական և քաղաքական նշանակութիւնք չեն տար՝ ինչպէս քանի տեղեր սխալած գրած է Պ. Հեղինակ, և ներելի չէ Հրէական ինչ ինչ սովորութիւնքը նա և Հայոց վերագրել։

Ս. Խրք.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՆՈՆՔ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ
ԵՒ
ԲԺՇՆՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՀԱՐԱՑ·

(Շարունակութիւն և վերջ)։

4. ԽՈՐՀՈՒՐԴ ՀԵՏԵԻԵԼՈՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՀԱՐԱՑՆ։

Երբ զգալի լինի հիւանդութիւն՝ անմիջապէս պարտ է դադարել յաշխատանաց և խստիւ զգուշանալ կերակրոց գործածութենէ՝ ակնունելով ի հիւանդանոց փոխադրութեան և բժշկի գալստեան. պէտք է անկողին մանել և մանուշակի ու մշշոշի թեթև օշարակ ըմպել, զոր քաղցրացուցանեն մեղրով կամ մատուտակաւ (նուշը բիան). պարտին զգուշանալ ընկերներէն և վաճառականներէն նշանակեալ երեք դեղերէն։ Ինչպէս զօրականն և գործաւորն զգալով ներդրութեան ճշնշուման, գլուխն ծանր, անդամքն անխոնջ, երբեմն զիջանին վտանգաւոր խորհրդոց այս եխմել փունջ կամ գինի, որով ծանրացուցանեն ակարութիւնը, որ բռնելով և հարկանելով նոյնժամայն մեռաւոր հընարիւք կարող կլինէր դիւրաւ հեռանալ։ Աչացաւութեան համար պէտք է փութով ապաւինել բժշկաց խորհրդոց, քանզի յաճախակի տեսանելիք տարաբաղդ գործաւորաց հիւանդանոցաց մէջ, որ կարևոր հոգածութենանց համար մի քանի օր, մի քանի ժամ պարտականց գանուելով կորուսած են է զի մի ակն և է զի երկուսն ի միասին։

Տաքսիքական հետևանքներ — Սոցա ամենածանրներն ծաղիկ հիւանդութիւնն և նորա հանդամանքն, վարդախտն (Rougeole), տենդ շառաւղայն (Searlatine), քոս (gole), գոնորէթիւն (Feigne), որ երբեմն վտանգաւորական է ածելեաւ. մալգնուէթիւն, տապրզկեան կամ գաղղիական ախտ. հիւանդակք չեն համաձայն արևելեան միւս ժանտ ցաւոց վերայ։ Երէկ պատահմամբ մնարմնոյ մի անդամն այրեցած է՝ պէտք է այրեցած մասն ընկղմել ցուրտ ջրոյ մէջ, կամ ծածկել ճնշմամբ և անդադար զովացուցանել ցուրտ ջրով, և այդ ցուրտ ջրով լուացումն պէտք է գոնէ երեք կամ չորս ժամն զկին այրեցածին օգուտ տալոյ պատճառաւ։ Ցուրտ և մաքուր ջուրն է լաւագոյն դեղ գործադրելի ճնշմամբ պատճառած վերայ վերայ։ Երէկ վերքն է գերազոյն անդամոյ վերայ՝ կարելի է արեան բղխումն կացուցանել մատունքն կոխելով վերայ բերանն, անթափին երակն, որ հարկանէ ներքին և գերագոյն մասն բաղկի՝ կարևն կացուցանել՝ բայց շատ դժուարութեամբ։

Ծառնաւորութեան ձեռնէ, մարմնոյ պատահմանց ջնջումն։ — Ծառնաւոր օձի խայթուածն և ներդործութիւն որպիսի և իցէ թունիւ պէտք է անմիջապէս ժամանակ ինիւ կապել երակային շրջանը արգելելոյ համար, յետոյ առանց ժամանակաձգութեան կոչել բժշկաց օգնութիւնն։ Եթէ երբ կատաղի անասնոյն է խայթուածը, և մի անդամոյ վերայ է, պէտք է այնպէս կապել և լուանալ օշնանի հիւթով՝ կամ ջրով՝ առ ի չգոյէ այլ նիւթոց, և փութապէս տալ բժշկացն խորհել զայն. կատաղի անասնոց խածուածոց առնիս կարևոր միջոցն է վերայ խորին և կատարեալ խարիլն։

(ա-նա-ոդո-ղի-ի կառանա-ձով։ — Երբ որպիսի և իցէ մի թոյն մտանէ խառամոքսին, առաջին առնելիքն այս է, զըգռել զխտխռումն կամ ըմպել տալով 5 կամ 6 հարիւրադրամ մաղձադեղ կամ արբուցանելով դաղջ ջուր, կամ խառզեցուցանել զորկորն փետրով, որով փսխի հիւանդն։ Եւ յետ այնորիկ պարտաւորի հիւանդն կարճել բժշկութեան անտեղի անձանց խնամատարութիւնը, քանզի նոքա երբէք ոչ ճանաչեն խառնեալ նիւթից բնութիւնն։ Երբ թոյնն ծանօթ է, ահաւնորա անդեղայն (փազէհիրը)՝ զոր կարելի է տալ ըմպել՝ սպասելով բժշկութեան։ Օ՞ր մեք դասաւորած ենք նոցա հարկաւորեալ կանոնաց մէջ, պէտք չէ մոռանալ երբեմն թէ կայ կատարելապէս ազդու դեղթափ, որ կարէ բոլորովին արգելուլ թունից ազդեցութիւնն։ Վ՞ր՝ ջապէս պէտք չէ շուռտով բժշկի երթեւեկութիւնն դադարեցնել, որոյ ներկայութիւնն միշտ օգտակար է՝ խնամքներն կարգաւորապէս գործադրելու, և շատ կարևոր է ստոյգ օգնութիւններ տալու համար, որք իսկապէս վերաբերին ախտացելոյ վճռակի առողջութեանը, որպէս և երակահատութիւնն։

(ա-նա-ոդ ասելն փոխեցուցանել։ — Երբ որ մի մարդ կերած է թունաւոր սունկն, անմիջապէս պէտք է տալ նորան 60 գրամ դերչակի ձէթ, մի մաքրողական դեղ գրեխով, յետոյ նարնջի ծաղկանց ջուր, որոյ 125 գրամի հետ պարա է բազադրել 8 գրամ éther, որ է ցնդական և ոգելից հեղուկ արտադրեալ թթուածնին աղից արաղով։ Այս խառնուրդն պէտք է ըմպել մի մի լի գրկալ 5 լոսկ միջոց առ լով։ Այլ եթէ չգտանի նարնջի ծաղկան ջուր և միւս հեղուկն, քացախով կամ կիտրոնի նիւթով սաստիկ թթուացրած ջուր տալ ըմպել։

(ծ. 5. Պաղոճական ձրագիչք։ Պաղոճականութեան ամենայն մասանց առաջինն՝ է առողջապահական կանոնքն, որ նախնեաց ժամանակին կայր, և արդեամբ ևս գրեթէ մինք ոչինչ չինք աւելացրել այն առողջապահական կանոնաց վերայ, զոր նախնեաց քննիչ ոգին աւանդեալ է նոցա այս նկատողութեամբ։

Դիպատական պատմութիւն, Մովսէս և Պէնեոփոն տան մեզ դիտել թէ՝ առողջապահական պատուիրանին եղած էին ճիշտ օրէնք, և դարձած կրօնական սովորութիւն իմաստուն օրինադրաց ձեռօք։ Ըրևելեայց այս առողջապահական հին կանոնքն պահպանուած էին հին օրինաց մէջ, զոր Մուհամմէտ տուեալ է արդի ա-րևելեայց։

Հիպոկրատեայ մատենադրութեանց մէջ կարելի է գտանել առաջին անգամ այն առողջապահական կանոնքն վերածեալ առ սկզբնանիւթն, և բժշկականապէս քննեալ։ Պլուտարքոս և Օլուժէլ ևս թէպէտ սոյն իսկ առարկայի վերայ դրած են, բայց Գաղղիան մի ամենամեծ քայլ ունեցաւ բժշկականութեան այս մասին մէջ, և այսօր մեր մէջ գործադրելիք առողջապահական կանոնքն նորա են՝ որ ամենայն մասամբ գերազանց քան զամենայն։ Վ՞եշտասանեակորդ դարուն մէջ Սալեռնէի ուսուցիչներն հրատարակեց առ Ռոպեռ նոքա մի առողջապահական ձառ, որոյ բազմաթիւ վճիռներն ընդհանրացած են այսօր։ Երկի գիտութեանց դիւրք նեղեն

նուազ փորձառութեամբ ուսանել ա-ռողջապահական կանոնս։ Մեր գարու սկզբան Հալէպ մեծ վարժապետն բունա-դատուած էր փորձով հաստատել այն դիտութեան սկզբունքն՝ որում շատ պար-տաւոր էր։

Կնալուծութեան յառաջադիմութիւն-քըն՝ լուծման հնարքն կատարելագործե-լով ներեն յուսալ, թէ պիտի գայ այն-պիսի մի օր՝ որ պիտի տեսանեն հաստա-տութեամբ օդագնացութիւն և մինչև յուսուս մեր անխմանալի կերպիւ ընա-սակար ճանապհուած հեղուկաց սկզբունքն, և այսպիսի մի արդիւնք անշուշտ պիտի շատ առողջապահական ծանօթութիւնս տան, որ է անբաւ բարերարութիւն մարդ-կութեան։

Թարգմանեաց է Գապրիէլեան

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՄԵԱՆ։

ՏԱՐԱԿՈՑՍ.

Շատ և բաւական են թիւք այն ազգասէր ու-սումնականաց՝ որք զանազան հնարներ են մտա-ծում մեր Ազգի լեզուի մշակութեան համար, և ամենեցուն ձիգն այն է՝ որ համանգամայն յա-ջողին տարրացնել Ազգի ամենայն դասակարգի մէջ գպրութեան սէրը և ամենեցուն զիւրամա-տոյց առնել ընթերցանութեան միջոցները. բայց դեռ չերևեցաւ մէկ այնպիսի անձն՝ որ խնդիր յա-րուցանէր թէ արդեօք ի՞նչ հնար կայ, որ Հա-յերէն երեսուն և վեց կամ իննն տառերը, այն է Հայոց Այբուբենքը՝ ընդ ամենայն տեղիս, ուր մի-անգամ ցրուած են մեր համազգիք, միօրինակ հնչիւն ունենան, այս ինքն՝ մի և նոյն տառերը մի և նոյն ձայնը հանեն ամենայն տեղ։

Գիտնական Քհնրոբէ Պատկանեան՝ որ մեր լե-զուի ծագման և կազմութեան վերայ ներքազնին հետազօտութեամբ աշխատասիրեց, և նորա ան-թափանցելի մթութեան վերայ նոր լոյս սփռելով՝ և այս առարկայի մէջ ևս աւագագոյն տեղին ան-փականեց, թէպէտ և նորա սրաքիր տեսութենէն այս մանաւոր փոքրիկ պարագայն ևս չմնաց ծած-կեալ, բայց ինչպէս երևում է, կարծեց՝ թէ սո-րա համար պէտացաւ կրկին դեռ ևս ժամանակն չէ հասել։

Ա՛յլ ինձ առանձին հարկաւորութիւն հանդի-պեցաւ՝ որ այս նիւթոյ վերայ դրաւոր մտածու-թիւն անեմ, և իմ Տարակոյս հրատարակեմ Արարատ ազգապարծանք հանդիսիդ միջնորդու-թեամբ, և հայցեմ ամենայն ձեռնհաս ուսումնա-կան մեքենէից, որ ըստ իւրաքանչիւր կարծեաց՝ այս տարակուսանացս լուծումն շնորհել բարեհա-ձին, որովհետև այս՝ իմ անձնական գործ չէ, այլ՝ ազգային բիւրատեսակ խնդրոց մէկն է, և այն բաւական դողտրիկ խնդրոց, և չէ արժան այսպիսի խնդիրն թողուլ ի զանցառութեան և թոյլ տալ, որ իւրաքանչիւր ոք ըստ քմեց լեզուի օրէնսդիր նստի, և իւր կարծիքն՝ կամապաշտու-թեամբ աստուածացուցանէ, ըստ որում՝ հասա-րակեալ առած է, թէ ամենայն ոք սիրէ զիւր կարծիս՝ որպէս զիւր ծնունդս։

Ընդ ամենայն՝ երեսուն և իննն տառերն են մեր Այբուբենք, և ոչ աւելի։ Զինաց տառերի նման հարիւրաւոր չեն. սեպագրաց և բևեռագրաց նման հազարամեայ հնութեանց մնատախուղներով և բիւրակերպեան կամայական դասաւորութեանց պայմաններով աղօտացած չեն։ Եգիպտացը նշա-նագրաց նման քսմածին հնարների գաղտնեօք քօղարկած չեն։ Որ միանգամ գէթ փոքր ինչ սովորել է Հայերէն ընթեռնուլ կամ գրել, նա արդէն գիտէ՝ որ Այբն՝ ա է, Բենն՝ բ է, Գիմն՝ գ է, Դան՝ դ է։ Բայց բերանէն արտասանելոյ ժա-մանակն՝ Էջմիածնի գաւառակից կամ մերձակայ Արարատեան ծագաց Հայն՝ այլ կերպ է հնչում. Աստրախանայ և Ղզլարայ և Շամախու և Բա-գուայ Հայն՝ այլ կերպ. Պօլսեցին, Զմիւռնացին, Կարնեցին, Տարօնեցին, Թրակացին, Մակեդոնա-ցի, Եգիպտացի և Տաւրիկեցի Հայն՝ այլ կերպ. Տփխիսեցին, Տայոց և Գուգարաց Հայն՝ այլ կերպ. յատուկ անուանց մէջ՝ այլ կերպ, ընդհանուր անուանց մէջ՝ այլ կերպ. և այս իսկ այլակեր-

պումիւնների են, որ շատ տեղ և շատ անգամ աղաւաղում են և խանգարում են գպրութեանց յառաջադիմութիւնն. Արդեօք որո՞յ պարտաւորութիւնն է այս խնդրոյ շարժիչն, սորա վերայ խորհիլն, հոգալն և գործման գտանելն. Մինէ ըստ իւրաքանչիւր գաւառաց տարւոյ ձայների զանազանութիւնն սակաւ կամ ղիւզնաքաջ տարի է և բարբառոյ զանազանութեան, որ լեզուի մէջ անգամ գտնուի է միջնորմն և տարբերութեան և բաժանման, մէկ գաւառի գրածն՝ միւսին՝ օտար ազգի և օտար լեզուի պտուղ համարել տալով: Մինէ լեզուի և բարբառոյ զանազանութիւնն՝ չնչի՞ն պատճառաց մէկին է՝ համազգեաց՝ ի միմեանց օտարանալոյ. Ցոյժ և յոյժ մեծաւ իմաստութեամբ է գրել գրողն, թէ երբ նախանմութիւնն կամեցաւ ի սկզբան պատուհասել ամբարտաւանութիւնն մարդոց՝ որոց մի էր լեզու և բարբառ, լեզուաց բաժանումն արաւ իւր բարկութեան և հարուածոյն գործի. լեզուաց բաժանումնէն ծագեցաւ խառնակութիւն, խառնակութենէն՝ ցրուումն, ևլն. ևլն. ևլն.

Երեսուն և ինն տառ ասացի. Երեսուն և վեցն Մեսրոպեան աստուածատուր պարգևն ենք համարում և հրատարակում. ա, բ, գ, դ, ե, զ է, ը, ը, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ց, ն, շ, ո, չ պ, ջ, ռ, ս, վ տ, ր, ց, ւ, փ, ք: Աւելցուցած երկուսն՝ օ, ֆ, ասվում են փոխ առած յօտար ազգաց, այլ թէ ոմ է այն փոխառողն, յորմէ՞ ազգէ է առել, չէ պահել պատմութիւնն և ոչ աւանդութիւնն՝ ոչ փոխառուի անունն, և ոչ նորա յիշատակն, ոչ փոխառութեան շարժառիթն և ոչ փոխառութեան ժամանակն, կամ տեղին, կամ հանգամանքն. միայն ձեռագրաց մանրազննին հետազօտութիւնն գուշակաբար կարէ մէկ կարծիք յարմարել՝ թէ և անհիմն և յողդողդ.

Եւ զարմանալի չէ՝ որ այս փոխառած օ, ֆ, մնտել են մեր լեզուի մէջ, և մենք չենք խնդամուտ եղել նոցա ներս սպրդելոյ պարագայից, մինչ աստուածատուր, աստուածապարգև, աստուածաշնորհ երեսուն և վեց տառերն ևս մնացել են այնքան անհինա՛ր և անհնչակ, որ կիսով չափ իւրեանց հնչմանց աղաւաղ այժմ եղել են տարակուսանաց առարկայ. Ոզորմի Խորենացու և Կորիւնի և ոմանց այլոց հօր հոգուն, որ մեր բնիկ ազով չեն փարուել և զանցառութեան չեն տուել, ապա թէ ոչ՝ ուստի՞ պիտի իմանայինք Մեսրոպայ այնքան վշտամբեր աշխատութիւնն, որոյ այսօր պարծենալով ենք անունն յիշում:

Բայց այս ասելով մի՛ կարծէք թէ կամենում եմ մեր ազգի անտարբերութիւնն դատապարտել: Ոչ: Քան զմեզ շատ առաջ, թերևս առաքելոց ժամանակակից մարդիկ ևս՝ մոռացել են շատ և շատ բան՝ գրով աւանդել, որոց մին է և այս, թէ խաչակնքելն յումմէ՞ է եկեղեցւոյ մէջ օրինադրուել և երբ և ո՞ւր: Մէկ տառ ևս կայ, որ առագաստիր նօտարաց և քարտուղարաց ստեղծեալն է, և այն է Ե տառն, որ է ե ու – տառերի բաղադրութիւնն, որով եղել են ընդ ամենն երեսուն և ինն տառք.

Ա յս երեսուն և ինն տառից վերայ մէկ հաստատուն կանոն դնելն՝ խիստ աւելի ծանր և անհնարին գործ չէ՝ Հերակլէսի նահատակութեանց հասարակ դժուարութեամբ ի գլուխ բերելի. և մեծ ամօթ եմ համարում, որ օտարք՝ մեր Հայերէն գրականութեամբ պարապող Եւրոպացիք՝ այս անտեղութիւնն մեր աչքը ցցեն և մեզ առաջնորդ հանդիսանան: Մանաւանդ որ այս երեսուն և ինն տառերէն քսան և երկուքն, այն է՝ ա, գ է, ը, ժ, է, լ, խ, հ, ձ ն, շ, չ, ո, ս, փ, ց, ֆ, ֆ, և, օ, ֆ, կարօտ չեն օգնութեան, որովհետև ամենայն տեղ միօրինակ են հնչում իւրեանց ձայնը, թէ Մշու կողմն, թէ Հնդկաստան, թէ Սիւնեաց երկրումն և թէ Վալաքիա կամ Ղազարու վանքումն: Մնում են միայն՝ այս տառերն, բ, գ, դ, է, ժ, լ, յ, ղ ծ, յ, պ, ջ ռ, և սոցա հետ միասին՝ ը, ո, վ –, և դարձեալ գ տառերն, որ հարկաւոր եմ համարում առանձին քննութեան և հաստատուն կանոնաց նելոյ դնել, որով մեր՝ ամենայն կողմ ցրուած ազգի բարբառոյ հնչիւնն միօրինակ արտաբերութիւն ստանալով՝ կարկի է թէ նոցա գործածական բառերի ձայնից մէջ ևս օր ըստ օրէ միակերպութիւնն զօրանայ, և այնպէս գամ՝ քան զգամ մէկ գաւառի Հայազգեայ միւս գաւառի Հայազգիէն համազգիէն օտար համարուիլն ազգի մէջէն վերանայ, եթէ մինչև այսօր դեռ վերացած չէ, և տակաւին կայ այն մեծ

Թիւնն՝ որ մէկ ժամանակ բռնացեալ էր մեր Աղ-
ջի մէջ, և այն՝ ասելի՝ երևելի քաղաքաց՝ Պօլ-
սոյ և Տփխիսի քնակչաց մէջ։

Ի Պօլիս՝ որ Ուռում էլի է, Ուռում էլիի կողմէն եկած Հայուն՝ բնիկ Պօլսեցի Հայն (եթէ բնիկ Պօլսեցի Հայ կարելի լինել) անուանում էր Տանպալթ, իսկ Անատօլուէն եկած Հայու անունն ասում էր Էֆոփէ։ Տփխիսի մէջ՝ Հայաստանէն եկած Հայուն, թէ Երևանցի լինէր, թէ Վաղարշապատցի, թէ Թաւրիզցի, թէ Ղարաբաղցի, ասնուանում էին զան ծրթք, իսկ Օսմանցւոց երկրէն եկածն՝ թէկուզ աշխարհական լինէր, թէկուզ եկեղեցական, միոլ անուամբ կնքվում էր Կոջա։

Շատ դարեր առաջ ևս՝ սովորութիւն է եղել Պօլսեցի Հայոց մէջ՝ Հայաստանի և Էջմիածնի կողմի Հայերու անունն Ուչ-Ելէք կոչել, որպէս և Արարատեան կողմանց Հայերն՝ նախ Կիլիկիոյ, և ապա Պօլսոյ Հայերուն Ակնմպեան կասէին, և այդ անունն ստեպ չէին տար նոցա՝ միայն այն պատճառաւ, որ նորա չկարծեն՝ թէ արդէն Ա-րևելեան Հայերն Ցունաստանից կամ Փափա-գաւանից դան են դրել զնոսա Իսպառ Տփխիս՝ դիս ևս չէ շատ ժամանակ անցել՝ Տաճկաստանի Հայոց կոչ անուան վերայ առատաձեռնում էին և Թաթախայ անունն, որ սովորական շրջակայ վայելեի լեռնականաց ոմանց ազգանուն էր։ Նոյնպէս Նոր-Նախիջևան՝ ոչ բաղում տարի առաջ՝ Հայաստանի կամ Էջմիածնի կողմէն եկած Հայերու անունն էր աճել, Խոյեցւոց կամ Պարսկահայոց Թափառական պանդուխտների անունն՝ Դեռելէ Ֆա ոտոդ, իսկ Օսմանցւոց տանէն եկածներուն անուն՝ անխտիր՝ Տանպալթ, թէ և ազնուական և գիտնական Պօլսեցիք կամ Զմիւռնեցիք լինէին, և այս ժառանգութիւնն բերել էին իւրեանց հետ Տաւրիկեան Թերակղզիէն, ուր գաղթել էին Անիէն։

Այս զանազանութիւններն էին միայն դառնաբեր արգելք միոյ լեզուի բարբառոց և նոցա միջի մէկ քանի բառից և տուից այլևայլութեանց, նորա Համագրութեան կապող և յօգուտղող և միաւորող թելերն էին Թուլացնում, կամ լաւ ևս՝ խզում, և մէկ Հայն՝ միւս Հայոյ աչքին օտար ցուցանում, և որ աւելի վատթարն է՝ Համարել էին տալիս արժանի ծաղուց, ծանակի, կատակի, ծաղրաբանութեան, խեղկատակ զուարճութեան և խոցոտիչ հեգնութեան, որ շատ դէպքերիկ և զուարճալի չարժառիթք էին սերմանելոյ ի սիրտ Համազգեաց ատելութեան, թշնամութեան և ազգաւէր ոխակալութեան՝ ի պատճառս կրեալ արհամարհանաց և անգոհանաց։ Եւ եթէ քարոզ միտ դնէինք՝ յայտնի պիտի տեսանէինք, որ այսպիսի և այսքան ցաւալի և ցաւելի խառնաիրարդորութեանց պատճառներն էին և են այն քանի մի տառերի արտասանութեան այլևայլութիւնքն, որ ազգի միութեան հիմանց մէկ քարնի վիմաց վերիվայր տատալելոյ ծայրագոյն շարժառիթների մէկն էր, իսկ այս դառն պտղոց բիւրոց ծառոյ արմատն՝ ազգի անտէրութիւնն էր, որոյ և ապացոյց այս էր, որ երբ մէկ հզօր զօրութիւն իւր ուշադրութիւն դարձնում է այս ազգի և ազգութեան բնութեան խոցերի մէկի վերայ, այն խոցի բժշկութեան հնարն՝ թէ կանուխ և թէ անագան գտնվում է, եթէ այն բարոյական խոցերի մէկն տառերի այլ և այլ հնչումն է, միս աւելի վնասաբեր խոցերի մէկն ևս՝ է լեզուի և խօսակցութեան մէջ օտար բառերի սպրդումն, որով գոգցես ընդ ամենայն տեղիս մեր քնքուշ և քաղցր բարբառն աղաւաղուել է և խանգարուել։ Բայց մէկ փոքրիկ ճիւղն սկիզբն արար դարման հասուցանելոյ, որով այն մէկ խոցի՝ ազգային մարմինէն մերժելոյ պրաւականն ստացանք շշուփելի եղանակաւ։

Վ.Եհամաւտ Նահատակիկոսն ամենայն Հայոց Տէր Գէորգ Արքեպիսկոպոսը Հայրապետն՝ իւր շնորհաբեր այցելութեան ժամանակն Սանկտ-Պետերբուրգ մայրաքաղաքիս՝ նկատելով՝ որ տեղւոյս Հայազգի ժողովրդականաց ոմանք մանուր Հայերէն աշխարհիկ լեզուաւ են խօսում, և ոմանք խառնիխուռն ռուսաց, տաճկաց, վրաց և այլ զանազան ազգաց բառեր՝ անխտիր խօսակցութեան մէջ խոկելով և խճողելով, որով Համարեա թէ Հայոց լեզուն իւր բնիկ դեղեցկութիւնն՝ նոցա անզգայ շրթանց մէջ խստաւ կորուսանում էր (յորոց սակի և ես ինքն խակ էի՝ սիրահարս նոր Նախիջևանցոյ ոամկական հին լեզուին) ընտա-

նեկան խօսակցութեան ժամանակն՝ ուր ես չկայի անձամբ, մէկ օր ցոյց տուեց իւր իրաւացի արդար դժգոհութիւն Ժողովուրդն՝ որ արդէն հասու էր եղել այդ անտեղութեան, միաբերան խնդրեցին, որ Սրբազան Վեհափեան մէկ հնար տեսրինէ. Նորին Վեհափառութիւնն իւր հայրական դիմութեամբ այս զուարճալանական թեթև խրատն տուեց, ասելով. «Չէ ապաքէն դուք ամենեքեանդ եղբայք էք, ձեր մէջ այս կանոնը հաստատեցէք, որ ով կամենայ խօսել, թող իւր խօսքն առաջ հայերէն բառերով մտածէ, որ ապա միայն մաքուր հայերէն կազմեալ հանէ բերանէն, եթէ գիտէ. իսկ թէ ոք՝ դարձեալ իւր նախկին անզգուշութեամբ և անմտադրութեամբ՝ յառաջ քան զմտածելն թէ ի՞նչ պիտի ասեմ, և ի՞նչպէս պիտի խօսիմ՝ բերանը բանայ և խառնիխուռն ցնդաբանէ, այլազգական բառեր իւր խօսակցութեան մէջ պատուաստելով, իրաքանչիւր օտար՝ հայոց լեզուի խանգարիչ բառի համար քսան կոպէկ տուգանք հատուցանէ ազգային դանձանակին, զոր դուք ունիք իրաւունք ձեր մէջ սահմանել յօգուտ որ և իցէ ազգասիրական գաղափարի»:

Եւ զիմդ կարծէք. Պետերբուրգ քաղաքի Հայոց լեզուն՝ թէ արանց և թէ կանանց այնպէս մաքրվեցաւ կարճ միջոցումն, որ կարծես՝ թէ ամենեքեան մէկ վարժարանի մէջ են դաստիարակուած, և առանին կենցաղավարութեան մէջ մաքուր Հայերէն լեզուն է ի հասարակաց գործածութեան: Ահա ապացոյց, որ եթէ մէկ ոի՞նչ և իցէ գործ կամենան տնօրինել, կարելի է գլուխ բերել. և Սանկտ-Պետերբուրգի Հայ ժողովուրդն առհասարակ ուրախ են և գոհ Սրբազան Կաթողիկոսի այս մտին Հայրապետական խնամարկութեան և տիրական տնօրէնութեան:

Ի 1865 թուականին՝ որդիս, Յովհաննէս Պատկանեան, որ իւր բանաստեղծական քանքարովն և քանի քանի աշխատասիրութեամբ յայտնի է հասարդի ուսումնական կաճառի մէջ, կամենալով ծառայել ազգին իւր ծննդեան քաղաքի մէջ, ինաց Նոր-Նախիջևան մանկավարժական պաշտօն կատարել իւր համազգեաց շրջանումն: Սա տեսնելով որ այն քաղաքի հայասեռ մանկանց յետադիմութեան բազմապատիկ պատճառաց մէկն ևս այն խառնափնդոր լեզուն է, որ իւրաքանչիւր աշակերտ իւր հետ բերում էր վարժարան, նոյնպէս իւր աշակերտաց մէջէն սկսեց այն փուշերին մի առ մի քաղել, թէ արուս մանկանց և թէ պատանեկուհեաց շրթունքէն ամեն մէկ օր երկու երեք օտարազգի բառ լսելով, և փոխարէն՝ մաքուր հայերէնը արմատացնելով. և այս գեղեցիկ դրութիւնն տնօրինելով օժանդակ եղև, որ մանկունք մարթացան իւրեանց դերդաստանաց մէջ ևս այն եղանակ լեզուախօսութեան մուծանել, և տեսնելով՝ թէ մեծ օգուտ պտղաբերեց, Նոր-Նախիջևանցոց լեզուի մէջէն ընտրեց հազարաւոր օտար ազգի բառեր, և մէկ առանձին փոքրիկ Բառարան ձևացոյց, որ 1870 ամի սկզբանն՝ ձեռնտուութեամբ Նոր-Նախիջևանայ քաղաքի Յովհաննէս Պապախեանի, տպեցաւ ի Ս. Պ. բուրգ ընդ լեզուաւ՝ օտարազգի ուսմունական, մաքուր հայերէն, ռուսերէն և գաղղիարէն. (տպարանի տնօրէնն՝ կամելով ռուսերէնի հետ ճշդրտել՝ գաղղիարէնի մէջ մտան էր խառնել.) և ըրբուկի անունն էր «Ժողովածոյ օտարազգի բառերի, Նոր Նախիջևանցոց լեզուի մէջ մտածուց», Եւ այս Բառարանը ղեկտաղնոյ ցրուեց քաղաքի մէջն: Այս հատուցմառ Բառարանի օժանդակութիւնն, և Սրբազան Վեհափեսի խրատներն, ընդ ամենայն հայաբնակ քաղաքս, ասելով, եթէ Հայ էք, սիրեցէք ձեր ազգն, պահեցէք ձեր լեզուն և կրօնն, և մերժեցէք ձեր բերնէն ամենայն ինչ օտար. որք և որպէս սերմն բարի՝ ի բարերար երկիր անկանելով՝ սկսել էին բարի պտուղ տալ, այն արգասիքն ունեցան, որ Նոր-Նախիջևանցիք իւրեանց առևտրական գործոց աղագաւ երթևեկութիւն յաճախելով այն արդէն լեզուն ուղղեալ հայաբնակ քաղաքներն, և ուղղախօս հայերու հետ հաղորդակցելով, և ի նոցանէ բարի օրինակ ընդունելով, այնպէս մաքրեցին իւրեանց Նոր-Նախիջևանայ հին օտարախառն լեզուն, որ այժմ ամեն տեղ հանդիսանում են՝ որպէս թէ իւրաքանչիւր երիտասարդք և

պատանիք, տիկնայք և օրիորդք՝ ընիկ հայազգական վարժարանաց մէջ ստացել են առանձին լեզուի մաքրութեան կրթութիւն։ Ա յս ասիկով կամիմ միայն իմ՝ համոզմունքն բացայայտել, թէ չէ անհնարին իմն մեր ոմանց տարից հնչիւնն ուղղելով՝ ազգի մէջ դիւրին ճանապարհաւ օր ըստ օրէ և բարբառոյ միութեան ըղձալի ճանապարհն հարթել։ Եւ այս՝ չէ լինիր մէկ նորահնար սովորոյթ, կամ նորաձևութիւն, կամ մէկ նոր և անընտել ճանապարհ բանալոյ ճիգն, կամ մէկ այնպիսի սեղանակապուտ յետադարձ, որ մեր բազմէից ազգական աւանդիցն նուիրական խոհրիսխներն խախտել սպառնայ, և ազգութեան զարգացումն խրամատէ։

(Մնացեալն է յետոյ)

ԲԱՐՈՅԱԿԱՆ

*Նարեկայ վանից վանականին Գրիգորի տաղք բաց ի տպելոցն՝ արտաքոյ ի Գանձարիս *)։*

Տաղ խոստանօքեայ գալստեան Տեառն, ի Գրիգորէ Նարեկացւոյ։

Էիննն էին ելին միննն ի յերկուց
մի երկակի հանգոյն էից ըզուարճ միշտ։
Միշտ անբաւ այսր հրաշունակ բան,
բան խորհրդաբեր եւ ներգին աղի չափ։
Զափ վայր ասպարէզ իջեալ ի տեղի տարրայնոյ,
տարփ տարփ ի վեր արփային, տարփ տարփ ի վայր նուսխայաւրէն ճեմ։
Ձեմ կուսինածոյ ծաղիկ, վարդ փթթեալ ի գիրկս մաւր.
հաւր սահման եւ կնիք կամի ասէր ժամ։
Ժամ եհաս, պտղէմրէոն հանդիսաւոր խումբ,
խումբ բաբունէից եաթանանից ռամ։
Ռամ մատենաւրեայ երագագրի տան,
տան գծագրենի միննն ընդ երեսդրեալ,
ահա կոյս յղասցի, երբ լինիցի այդ։
Այդ իսկ են զարմանք, զարմանալեաց բան,
մինչեւ լինիցի, երբ տեսանի հրաշ։
Հրաշ հրաման առեալ, մի տեսանել զմահ,
մինչեւ լինիցի քեզ կատարումն գրոյդ։
Գրով հոգիապատում զգուշակի բան,
բան խորհրդաբեր, աւետաբեր աւր։
Աւր աւուր բղխեալ, ժամանեցո ցերը,
երբ նոր երանեալ, երբին սկիզբն առեալ,
հրաման առաքի առ ծերունին զգաւն։
Զգաւն շնորհաւորի, անճառ շնորհի մնայ,
արի ճկ ի տաճարն, ահա հասեալ կամ,
զգիրկսդ ինձ յաւրինեա քրովբէական կառք։
Կառք համբարձայնոյ վերնակառոյց բազուկ,
փոյթ ի փոյթ ճեպեաց, զոյգս աղաւնեաց ընծայ։
Ընծայաբերիմ ես հօր, որ զիս ընծայեցոյց,
վաղ ի վաղ զարթիր արագ։
Արագ յարուցեալ ծերունւոյն հիւրասլաց ոտիւք,
եկեալ մտանէր ի տաճարն, ի գիրկ իւր ընկալեալ զՅիսուս։
Փ. Յիսուս տղայ մանուկ, որդի անծերունի հաւր,
հաւր հաշտ կամարար, մատամբս աղաչեմ,
շրթամբքս պաղատիմ, զիս արծակեա տէր։
Տէր իմ տէր Յիսուս, զոր կապեցերս, այժմ արծակեա,
նոյն ահա տեսի զհեթանոսաց զլոյսդ։
Լոյսն ի լուսոյ, գիր Թողութեան մեզ ծագեցար,
որ ընդ ծերունւոյն հայցմամբ Թող մեզ տէր զգիր պարտեացդ,
հայցմամբ ծնողի քո, որ լրմամբդ եղեր մեզ Թողութեան ամպ։
Ամպ յամարայնոյ ցաւդ ծիւնանման մեզ ծագեցար.
տղայ քառամանաւրեայ յայտնեալ մանուկ դու։
Դու ի սրբութեան սրբարանի տուրք,
տուրք եւ սրբութեան սիրող, սրբեա զմեզ ի մեղաց.
կենդանարար քո զալստեամբդ,
ընդ մեզ Աստուած յայտնեալ, փառք Իսրայէլի ժողովրդեան քում։

(*) Էին ընծիր ձեռագրաց մէջէն գտնուած են, թէպէտ ոմանք կարծիքական։

Այլ պաղ գալոփեան Տէառն առ Պաղպ, է յայն կէնդանապուհին ճաշն, այլ եղանակ, է Գ՝ըլէզ Նաբէկաց-ոյ:

Աւետիս մատուցանեմք նոյն Մարիամու եւ Մարթայի
այն սիրելի քերցն.
Վորք քորք նորախնդիրը յառաջ ելեալ Փրկչին:
Փրկիչ տէր Ցիսուս Քրիստոս, Ձէ աստ էիր դիպեալ,
եղբայրն մեր ոչ մեռանէր:
Ե՛կ եւ տես զաղէտս աղետակոծ սրտից:
Սրտից ճանապարհ առեղենաճեմ,
ետմ ցովիւնընծայ գերեզմանին դուռն:
Դուռն վիմակառոյց, հրաման արքունւոյն
դուք վեր առէք զվէմդ:
Վէմ արթնաչեայ՝ մեզ նոր աւետիք,
աւետաւոր տեսիլ:
Տեսիլ զարմանալի զարմանք,
սքանչելիք սքանչելագործ խմբից:
Փ. Զայնն այն որ զաշխարհս ետեղծ,
ծայն տայր Մարիամու եղբաւրն.
Պաղարէ արի ել արտաքս ի դժոխական բանդէդ:
Կեանք եւ յարուԹիւն մարդկան ի յերկնից յերկիր եկի.
անմն որ հաւատայ ի յիս, յաւիտեան նա մի մեռցի:
Ես այն եմ որ զԱդամ ստեղծի, եւ յաղին դրախտին եղի,
պատուէր հրամանի ետու գործել եւ պահել զնա:
Զարին խորհրդոց լուաւ, յերկիր անիծից անկաւ.
եկի վերստին կանդնել զիմ արարչական պատկերս:
Դարձեալ նորոգեմ զսա, եւ անմահական առնեմ
փոյթ ընդ փոյթ արի ել արտաքս իմ կենդանական
ծայնիւս:
Մի արդեաք յամեր դու այդր, ճանապարհ հոգւոց
գործեմ,
ընդ նոյնդ եկեսցեն որք այդր յորժամ բարձրանամ
ի խաչն:
Աւետիս դու տուր դոցա, գերեաց գերեղարձ լինել.
ասմ Ադամայ զարթիր, արի որ ննջեաց ի գրի:
Իմ մեծ սիրելին Ցիսուս այսաւր ինձ գոչեց ծայնիւ,
համբեր սակաւիկ մի աստ, նա ինքն եկեսցէ առ քեզ:
Զովսան զոր եղեր քեզ տէր, յորժամ ի դրախտէն եհան,
նորոգել եկեալ զքո հոգանիւթ բնութիւնդ:
Զդժոխս աւերել կամի, գերեաց գերեղարձ առնել.
ի յաղին դրախտին տանի զիւր աստուածատիպ
պատկերս:
Գերադոյն վեհիցն առնէ դասուց երկնային զարթաց,
անճառ խորհրդոցն հաղորդ յանտանելի ի լոյսն:
Ի քառակերպեան աթոռ, ի հայրենական ի ծոցն,
սրբասաց ծայնիւ աւրհնել ի սրովբէական դասուցն:
Ընդ երեքանծնեան բնութիւնն տէր երկնի եւ երկրի
կոչի,
ցնծա նախահայրդ Ադամ հանդերձ ծննդաւքդ քո:
Ննդա նախամայրդ Եւայ, երկունք անիծից լուծան.
կոյսն Մարիամ ծնաւ զէնն Աստուած որ էր ընդ
հաւր:
Խաչիւ եւ մահու գայ աստ, քակտէ զաւրութիւն մահու.
զիշխանն մահու կապէ, աւար առնելով զդժոխս:
Մինչեւ հայրական փառաւք զարծեալ վերստին դառնայ,
զատէ զատաստան արդար ըստ իւրաքանչիւր գործոց:
Զվիշապն առաջին կապէ, ի հուր զհեթենին մատնէ.
եւ զբանսարկու նորին հանդերձ պաշտաւնէիւք
իւրով:
Ի խորս անդնդոց ածէ զսպանողս որդւոց մարդկան.
յարտաքին խաւարն տանջէ արդար իրաւամբք իւրով:
Ադամ նախահայրդ մեր մի անլուր լինիր բանիցս,
նա այն Միածին որդին լոյսն որ քան զարեւ յառաջ:
Նա ի մորենին վառեալ, լոյսն ընդ Մովսեսի խաւսէր,
ի Սինէական լերինն տառից օրինաց տուողն:
Բանն Աստուած ի ծոցն հաւր, լոյսն որ ի հաւրէ լուսոյ,
նոյն ինքն իսկակից էին, որով զ յաւիտեանսն արար:
Գայ ժողով առնել ազգաց, նոր նորոգելով զերկիր,
բառնայ զ յաղթութիւն մահու, եւ անմահութիւնն
շնորհէ:
Դարձեալ դառնալով դարձիս ի յեղեմական ի դրախտն,
դարձեալ ճոխասցես անդրէն հանդերձ Եւայիդ քո:
Դարձեալ պար առեալ ցնծայ հանդերձ ծննդովք ձերովք,
ժառանգս երկնայինս ստացայք զառաքելական դու-
մարսն:
Ցնծասցուք եւ մեք յուսով, տանն նոր տաճնեսցուք
այսաւր,
տացուք տուողին բարեաց փառք եւ զոհութիւն
յաւէտս:
Որ ետ զառհաւատչեայ կենացն յարուցանելով զՊաղար.
ընդ Հաւր եւ Հոգւոյ նորին այժմ եւ յաւիտեանս
ամէն:

Այլ պոպ յաբո-ընեան է Նաբեկացւոյ *)։

Անուն անեղ էին էին Աստուած է.
Է միշտ յէութեան յանհասութեան նոյն։
Նոյն ինքն է նման, նոյն մի եւ նոյն մի.
մի ոմն ի յէից անդրէն ի նոյն Թիւ։
Թիւ միշտ եռակի զեռակի փառք.
փառք ի դիմատից էից դոյից դունդ։
Գունդ տրամք երամից կայք յանուրեք վայր,
վայր համրից բիւրից աւր սահմանեալ զետ։
Դետ քառանիւեայք պատպատաչ երկինի փայլ փայլ,
փայլ փաղփիւնատրած անծայրենի լոյս։
Լոյս զերազանցիկ երկնաշաւիղ ուահ,
ուահ արքունացեմ վերայ ծովու քայլ։
Քայլ վէմ շարժելով տեղիարան նիստ,
նիստ արքունացեմ անապատ ի տուէժ։
Տուէժ ի ծարաւուտ երկրի երկին կոյս.
կոյս սրդիւնալուր սիրանուռնդ սէր։
Սէր հարկաւորեալ կամից կատար կամ,
կամ ժամին հասեալ պատերազմի աւր։
Աւր պարզ եւ Թերի, աւր մի յայտնի տեառն,
տեսռնագիր հրամանն, ես բարհրանամ դէտ։
Դէտ իմ զիտանոց դէմ հաւատոյ ճեմ,
ճեմ պատմուճանի բոսորայնոյ գոյն։
Գոյն ներկեալ արեամբ աղբիւր բղխեալ կող,
կողիմնապատիր պարտեաց յառաջածայն։
Ջայն տուք դատերացդ սիոնի, ղի լայք,
ղի լայք ու աւաղէք, պսակ ի գլուխ իմ։
Իմ վարսս անծրեւով, քաղցրիկ ցողով լի,
լի ու լրումնօրէն զիս պսակեաց մայր իմ։
Մայր իմ հետեւող ժամադրաւղին,
աւր աւր երեցաւրեայ ես տապանի դնիմ։
Դնիմ դէմ դժոխոց աւարողին բուռն,
բուռն զաւրութեամբ զաւրեղենին զաւր։
Ջաւր զաւրեղենին զաւրինահաս դունդ,
դունդ նուաստախումբ աւետարեր յոյս։
Ցոյս յուսաքերին ժաման հասէք լեառն,
լեառն Գալիլեայ, անդ տեսանէք զՏէր։
Տէր յարեաւ, կանայք զան ի հանդէս փոյթ,
փոյթ պատուէր տուք իմոյ Պետրոսեան բաժին։

(*) Սյս գոյր է տպագիրն, այլ կարի զանազան, որպէս և առաջ, ուսուց եմ գնդեցիկն, վասն այն և արտագրեցաք։

Երամք երամից ծեզ երանեն միշտ,
միշտ ծեզ երանեն, զի տէր յարեաւ այսաւր
Այսաւր տէր յարեաւ, փառք յարութեան տեառն,
տեառն զոհութիւն, փառք եւ պատիւ միշտ յաւիտեան։

Փ. Սեաւ եմ դեղնիկ դուստր Եւայի Երուսաղէմ,
հա սա հարեն իմ ցանկալի սիրելի, սիրով կապեալ ընդ փեսային։

Նմանեալ եղբօրորդին իմ այծեմանց որձուց եղանց,
հա նա ձայն եղբօրորդւոյն խանդաղատեալ սիրով լցեալ

Ել իմ սիրելի, ել մերձաւոր իմ հարսնուհի։
Էւ նա ածեալ զիս պատեցէք, տարեալ մուծէք ի տուն գինւոյ.
Աչք իւր աղաւնւոյ Թեւ լար կարմիր մանեակ ոսկւոյ,
հա նա ել ի լեառն կնդրկի, հոտ նարդոսի եւ զմուռի.
հա նա ել ի լեառն դիտարան, շուշան ծաղկաց, հովիտ դաշտոյ։

Ջի գեղ է դովելի, մանուկ անհաս անժամանակ,
հինաւուրցն եկեալ եւ մանկացեալ, մարմին զգեցեալ։
Դասք մարգարէիցն երդեն ի յայն բլրին վերայ.
որդիք սիովնի արիք ելէք ի բեղղէհեմ
ելէք ի յայրին, երկիրպագէք այն նորածին Թագաւորին։

Նոր մանուկ ծնաւ, այն որ աւրհնեալ է յաւիտեան.
յաւիտեանս յաւիտենից, Քրիստոս աւրհնեալ է յաւիտեան, յարուցեալ։

Փոխ հրկրորդ տաղին Համբարձման, որ ոչ դնի ի տպագրեալն ընդ գործս Նարեկացւոյն՝ ի 1840 ամի, այլ սկսուածն սկսեալ մամբ եղեալ է «Ոչն էին անէին», եր. 479. այլ որպէս ձեռագիրն մեր ընթեռնու, է ըստ այսմ «Ոչն է ինքն էին», որ և փոխան է։

Փ. Այն փոքրիկ հաւտին տրամեալ, վտակս արաւսուց ըղխեալ.
Այն սակաւ դնդին ողորմ աւաղիկ աղէտ,
զոչս ի վեր համբարձեալ յերկինս.
Որ ես հայր որբոց յուսով, ում յանձն արարեր զմեզ.
տարակոյս բաժին է մեր։

Ցիշեա յիշեա մի՛ մոռանար, սէր խոստացար անսուտ բանիւ,
ընդ մեզ լինել զաւուրս կենաց մինչ ի կատարած երկրին:

ԱԶԳԱՅԻՆ

ԳԵՐ. ԱՆԴՐԷԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ըստ հրամանի Վ. Ի՛Հ. Հայրապետի՝ Գեր. Անդրէաս Արքեպիսկոպոս՝ Հ. Տիսուսէն վճռակին Հ. ամախուչ՝ ի 27-ն ամսոյս եկն ի Մայր Աթոռս ի Ս. Էջմիածին:

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ
Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՑՍ.

(Շարունակութիւն)

Ի ՎԻՃԱԿԻՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՑ.

Հասարակութիւն Ղէյլաճ գեղջ.		7
Նոյն գիւղացի Մարտիրոս քհնյ. տէր Միքայէլեան		50
,, Սահակ Յակոբեան		20
,, Սահակի կին Փաշօն		20
,, Երեցփոխան Փուրթօն.		20
Հասարակութիւն Զրխլի գեղջ		10
Նոյն գիւղացի Յակոբ Մկոյեան		20
,, Յունան Մանուկեան		1
,, Տէր Աբրահամ քհնյ. Դիլանեանց.		20
,, Աղաճան Սաքոյեան		20
,, Երեցփ Յարեհին Յովհաննէսեան		20
,, Ուստայ Պօղոս		20
,, Սաքոյ Պետրոսեան		20
,, Առաքել Յակոբեան		1
,, Խաչոյ Վարդանեան		1
,, Ստեփան Սիմօնեան		1
,, Թորոս Թովմասեան		1
,, Մատոյ Քեահեայեան		2
Զրխլեցի Թադէոս Յարոյեան		50
,, Կոյր Մաքոյ Տէփանեան		50
,, Խաչոյ Յարութեան		1
,, Տէփանի մայր Աղին		50
,, Համբոյ Պետրոսեան		50
,, Վարդան Յարութեան.		50
,, Մաթեոս Կարապետեան.		50
,, Գրիգոր Պապիկեան		1
,, Վարդեր Շապոյեան		50
,, Խաչոյ Մանուկեան		50
,, Գոգոր Աւետեան		20
,, Յովոյ Աւետեան.		1
,, Յովէս Թադէոսեան		20
,, Գիւլբեազ Եայլոյեան		40
,, Մանուկ Յովհաննէսեան		20
,, Նազոյ Աբրահամեան		50
,, Նունոյ Բաղտիեան.		40
,, Նուպար Թորոսեան		50
,, Գրիգորի մայր Սուլթան		20
,, Խաչոյ Թադեոսեան.		20
,, Յօհաննէսի հարս Սաւան		20
,, Պօղոսի կին Շողեր Յակովբեան.		50
,, Դաւոյ Սաֆոյեան.		1
,, Սաքոյ Պօղոսեան.		25
,, Աբրահամ Բօզոյեան.		25
,, Դաւոյի մայր Շողեր.		50
,, Տէփանի մայր Եղան		25
Հասարակութիւն Ղզլքիլիսայ գեղջ.		12
Նոյն գիւղացի Կարապետ քհնյ. տէր Մկրտչեան		50
,, Տիրացու Սարգիս.		20
,, Ստեփան Ռոստակեան		50
,, Խաչոյ տէր Մկրտչեան.		20
,, Մարտիրոս Ղանտիլեան.		50
,, Մօսէ Մխոյեան.		20
,, Մարզար Եղիազարեան.		10
,, Պօղոս Գրիգորեան		20
,, Յովէս Աթոյեան.		50
,, Յօհաննէսի կին Նանօն		20
,, Փիլոսի կին Մարիամ		25
,, Տէփանի կին Սկրան		15
,, Բղտեի կին Սալթան		10
,, Աշղի մեր Սանամ		10

Ղզլքիլիսեցի Բրտէի Հարսը		10
,, Սաքօյ Թէկլարեանց		10
Հասարակութիւն Բոզդողան գեղջ	20	
Նոյն գիւղացի Սահակ քահանայն	1	
,, Ղարախանցի Պապօն		50
,, Մատօյ Սերոբեան		20
,, Մպիլը	1	
,, Խաչօյ քահանայն	1	
,, Տէրտէրանց Պետօն	1	
,, Տէր Ծովհաննէս	1	
,, Զաքօն	1	
,, Նիկօյ Սահակեանց	1	
,, Ղարախանցի Սարօն		50
,, Աւօյ Մկրտչեան		50
,, Աթօյ Մկ.քոնեան		40
,, Մկօյ Մկոյեան		50
,, Սաքօյ Մկրտչեան		20
,, Ալօյ Եսայեան		50
,, Փօլօյ Առաքելեան		20
,, Մանուկ Մխոյեան		40
,, Սաքօյ Ղուկասեան		20
,, Մանուկ Աւօյեան	1	
,, Գէորգ Աւետեան		30
,, Գէորգ Եղիկեան		40
,, Սաֆար Աւետեան		20
,, Գէորգ Սեթօյեան		40
,, Գրիգոր Ենկօյեան		20
,, Թաւիթ		20
,, Գրիգոր Հայրապետեան	1	
,, Ծարուխիւն Ներսեսեան		20
,, Դանիէլ Վարդանեան		40
,, Մխիթար Եղոյեան		50
,, Գրիգոր Ստեփանեան		40
,, Ծօվօյ Գասպարեան		40
,, Ծովսէփ Ադամեան		40
,, Ծովհաննէս Անտօնեան		20
,, Ստեփաննոս Ծօհաննիսեան		20
,, Տիրացու Մնացական		20
,, Վիրապ Գրիգորեան		20
,, Թադէոս Ծարուխիւնեան		20
,, Նազօյ Գասպարեան		20
,, Ծառուկ Պապոյեան		25
,, Վարդան Աւետեան		20
Բոզդողանցի Մկրտիչ Ղազարեան		20
,, Եփրեմ Պապոյեան		25
,, Սարգիս Բշարեան		50
,, Ծարուխիւն Գէորգեան		20
,, Ծորան Սահակեան		30
,, Թորոս Պապոյեան		20
,, Ծարուխիւն Մկրտչեանի կինն		20
,, Մկրտիչ Վիրապեան		10
,, Ղազար Գէորգեան		20
,, Սահակ քէհի կին Հռոմմ		50
,, Տէրտէրի Հարս Շուշան		50
,, Մպիլի կին Գիլպար		50
,, Թարզու կինն		20
,, Ղարախանցի Գէորգի կինն		20
,, Գրիգորի կինն		10
,, Պապօի կին		25
,, Նիկօյի զօքանչ		20
,, Մխոյենց Ծակօրի կինն		20
,, Նիկօյի Հարս Եազդիւլ		20
,, Տիրացու Մնացականի կինն		20
,, Սարօյի կին Նանօն		20
,, Պետօյի կին Եղսանը		50
,, Ծօբանի կին		10
,, Խաչատուր Մկրտչեան		40
,, Մարտիրոս Սուքիասեան		20
,, Աւետիսի կինն		20
,, Մկոյի կին Եղսանն		20
Հասարակութիւն Զիլիհանքով գեղջ	20	
Նոյն գիւղացի Մովսէս քահանայ Տէր Սարգսեան		1
Հասարակութիւն Փիրիքեան գեղջ		2
Հասարակութիւն Սօգիւլվի գեղջ	20	
Նոյն գիւղացի Գէորգ քահանայ Աւետիսեան		1
,, Ծովհաննէս քահանայ Աւետիսեան		1
,, Ծակովբ քահանայ Տէր Աբրահամեան		1
,, Տանուտէր Ծակովբ Կալաշեան		2
,, Երեսփոխան Գրիգոր Նահապետեան		1
,, Դանիէլ Փիլոյեան		40

Սօփուելեցի Յարութիւն Ղարաւեան	40
,, Ասլան Աւետիսեան . .	20
,, Մանաս Յարութիւնեան .	20
,, Յակոբ Մելքոնեան . .	40
,, Յօհան Վարդանեան . .	20
,, Խաչատուր Գրիգորեան .	40
,, Սերոբ Յարոյեան . .	20
,, Յովակիմ Վարդանեան .	40
,, Տիրացու Գրիգոր Յովհաննէսեան	20
Հասարակութիւն Հիւրվանջուխ գեղջ	10
Նոյն գիւղացի Գէորգ քահանայ Աւաքելեան . .	1
,, Խաչատուր քահէայն .	50
,, Փահլիվան . .	25
,, Խղղաթ քահէան . .	1
,, Զաքէ քահէան . .	1
,, Տիրացու Սիմոն . .	40
,, Ղազար Սարիբեկեան . .	25
,, Խալիր Իսկեանդարեանց .	25
,, Մանաս Ղանդիլեան . .	25
,, Խղղաթ Խաչատրեան . .	25
,, Դաւիթ Ղանդիլեան . .	25
,, Աւգալ Ասլանեան . .	25
,, Աւգալ Այվազեան . .	50
,, Երեցփոխան Սարգիս Յովհաննիսեան . .	50
,, Յովհաննէս Խաչատրեան .	20
,, Յովհաննէս Յարութիւնեան .	40
,, Մանուկ Ղազարեան . .	2
,, Պօղոս Կարապետեանց . .	25
,, Երանոս Մուրատեան . .	25
Բօղազքեասանցի Յարութիւն քահանայ Ղուկասեան . .	1
,, Երեցփոխան Քեալաշ . .	1
,, Այվազ քահէայն . .	1
,, Խաչատուր Նիկողոսեան .	50
,, Յարութիւն Յակոբեան .	20
,, Յովհաննէս Խաչատրեան .	20
Մօլլագեօղչացի Աւագ քահանայ Տէր Գէորգեան . .	1
,, Ղազար քահանայ Յարութիւնեան . . .	50
,, Երեցփոխ Սարգիս Փիլոյեան .	50
Մօլլագեօղչացի Պետրոս Բօզիկեան, Սիմէօն Յարութիւնեան և Տօնոյ Ներսիսեան . .	20
Հասարակութիւն Սարիբաշ գեղջ .	5
Հասարակութիւն Ղումնիղլաղ գեղջ . . .	4
Նոյն գիւղացի Շահպաղ Վարդանեան	20
,, Յարթին Յակոբեան . .	20
,, Խաչատուր Յակոբեան .	20
,, Մինաս Ղազարեան . .	20
,, Գրիգոր Աւաքելեան . .	20
,, Գրիգոր Խիզանեան . .	20
,, Սանտուխ կին Մանուկի .	20
,, Մանուկ Խէչանեան, .	20
,, Զարդար Դիլանեան . .	40
,, Յարութիւն Պիլանեան .	20
,, Արիստոդոմ իւղբաշի Բաղդիեան	40
,, Մկրտչի կին Մարգարիտ .	40
,, Եղիազար Մանուկեան .	10
,, Գաբրիէլ Յարութիւնեան .	20
,, Շահպաղի կին Հռիփսիմէ .	60
Հասարակութիւն Ղաւուղի գեղջ .	15
Նոյն գիւղացի Միքայէլ Ոսկանեան	1
,, Միքայէլ մհսի Դաւթեան .	1
,, Մհսի. Սարգիս Թամարեան .	1
,, Արին Արզարեան . .	1
,, Տիրացու Երամ Աւետիսեան .	1
,, Սարգիս քէհէն . . .	1
,, Յարութիւն Զախօյեան .	1
,, Կարապետ մհսի. Մակարեան.	50
,, Ազապաղ Սեխանեան .	50
,, Նախշքեար Սարգիսեան .	50
,, Պետրոս Խաչատրեան . .	50
,, Սիմէօն Մարքարեան . .	1
,, Տիրացու Բարսեղ Ղուկասեան	25
,, Փիլոն	50
,, Մկրտիչ Մարտիրոսեան .	20
,, Գէորգ Սարգսեան . .	50
,, Թադէոս մհսի. Մակարեան .	20
,, Յովհաննէս Գէորգեան . .	1
,, Վարդան Օծեանեան . .	20
,, Ղազար Եղոյեան . .	50
,, Կարապետ Մխօյեան . .	20

Վաճուլեցի Խաչատուր Նալբանդեան		20
,, Զաքոյ Աղէկեան . .	1	
,, Ենովք Մանուկեան . .		40
,, Մինաս Վազգրեան . .		50
,, Սահակ Յովհաննէսեան Դաստ- պարեանց . . .	1	
,, Մանուկ Թորոսեան . .	1	
,, Խոջ Յունանեան . .		20
,, Յարութիւն Վարդանեան .		50
,, Գրիգոր Սարգիսեան . .		40
,, Մնացական Յովհաննէսեան .		40
,, Եղիազար Սարգիսեան . .		20
,, Յարոյ Յովհաննէսեան. .		50
,, Պետրոս Սարգիսեան . .		50
,, Նազարէթ Ադանեան . .		20
,, Մ. Խ. Սարգսի կինը . .	1	
,, Տիրացու Սիմոն Աբրահամեան		20
,, Աբգարենց Նազօն . .	1	
,, Մուքիլի կին Մանին . .	1	
,, Երամի մայրն . .		40
,, Պարոնի Հարան . . .		20
,, Մօսէն . . .		20
,, Խոջի մայրն . . .		40
,, Նալպանտենց Յակոբի կինն .		20
,, Զաքոյի կինը և Հարսը .		40
,, Նալպանտենց Խաչատրի կինը.		20
,, Ժամկոչ Ադսի կինը . .		20
,, Սիմոն Մարգարեանի կինը .		50
,, Սարգիս քէհի մայրն . .		20
,, Թորոսենց Սարգսի կինը .		40
,, Գինոսի կին Շօդոն . .		20
,, Եղիազարի կինը . .		40
,, Թորոսենց Եղսանը . .		40
,, Բարսեղի կինը . .		40
,, Տիրացու Բարսեղի մայրն .		40
,, Գասպարենց Սահակի մայրն .		20
,, Մկրտչենց Գրիգորի մայրն .		20
,, Տիրացու Երամի հարս Եաղութը		40
,, Բարեչուռ Պատան . .		20
,, Տէր Խաչատուրի երեցկինը .	1	
,, Շիլ Ենօղլու Սարդանը . .		50
,, Սարգսի հարս Թադուհին	1	
Վաճուլեցի Գրիգոր քահանայ Դաւթեան	1	
,, Աղան Նազարէթեան . . .	1	

(Շարունակելի)

ՆՈՒԻՐ Պ. ՋԱՆՈՒՄԵԱՆՑԻ

Խմբագրութեան Ընթացք ամառային.

Մոսկուայի Հայազն վաճառական Սարգիս Դաւթեան Պարոն Ջանումեանց իւր հարազատ եղբօր ձեռամբ՝ Աստրախանայ Հայոց վաճառական Ստեփաննոսի Դաւթեան Պարոն Ջանումեանցի՝ առաքարկեց Հոգաբարձութեան Աստրախանայ Հայոց Ծխական երկսեռ Հոգևոր Դպրոցաց մի հարիւր սիսուն րուբլի գումար յօգուտ Օրիորդական Դպրոցի, զրամբ հնգետասան տումնակաց առաքելոց յանուն Բարերար երկսեռ Անդամոց, Հոգաբարձութիւնս տեսանելով իւր Համազգի անդամոց այսօրինակ ազգասիրական և ուսումնասիրական բուռն եռանդը և չկամելով զրուանի տակը թողնել այսպիսի նուիրագործութիւնը, որով նպաստումն աղքատ մանուկ սերնդոց բարոյական և մտաւոր զարգացման, ի ցոյց իւր գոհունակութեան՝ խնդրուեմ խառնարհաբար Խմբագրութենէդ, տեղ տալ այս յօդուածին Արարատ ամսագրոյ էջերի մէջ ի խրախոյս Պարոն Ջանումեանց և ի յընդհանուր գիտութիւն բարեսիրաց Համազգեաց։

Հոգաբարձուք Յովսէփ Ալազ Քահանայ Բունիաթեանց
Սիմէոն Պօպովեանց
Յովհաննէս Սարգսեանց
Սարգիս Բուրնազեանց
Գրիգոր Սողոմոնեանց

Համար 24.
12 Մարտի 1874 ամի,
Աստրախան:

Պ. ՄԱՍՈՒՄԵԱՆՑԻ ՆՈՒԻՐ

Խմբագրութեան Ընթացք Ամառային.

Աստրախանայ մերազնեայ Յովհաննէս Հայրապետեան Պարոն Մասումեանց ներկայ ամոյ 10ին

իւր յայտարարութեան հետ առաջարկից Աստրախանայ Հայոց Ծխական երկսեռ Հոգեւոր դպրոցաց Հոգաբարձութեան Օրիորդական Հոգեւոր Դպրոցի անուամբ մի հարիւր րուբլի, յայտնելով՝ թէ ցանկանում է նա Օրիորդական Դպրոցի մէջը ունենալ Սան (Թօշակակիր) մի աղքատ աշակերտուհի, ընտրութիւնը որոյ կախված լինի քանի կենդանի է իւր կամքէն, իսկ մահից յետոյ իւր ժառանգաց իրաւունքէն, և նկատից որ այն 100 րուբլին իրրև անմերձենալի գումար տալ կամ թագաւորական և կամ քաղաքային Հասարակական դրամատունն աճելոյ տոկոսօքն, և որոյ շահը համարել միայն տուրք ուսման յիշեալ աշակերտուհւոյ։ Հոգաբարձութիւնը դնդրոցաց մեծաւ յարգանօք ընդունելով Պարոնէն այն գումարը կարգադրեց արժանը և տուաւ Աստրախանայ քաղաքային Հասարակական դրամատունն եօթն ամ ժամանակաւ աճելոյ 7% տոկոսօքը. Համաձայն ցանկութեան նուիրատուին տոկոսը կգործադրէ Պարոն Մասումեանցի Սան աշակերտուհւոյ ուսման համար։ Ա՛լ որովհետև յիշեալ Մասումեանցը շարժած ազգասիրական և ուսումնասիրական բուռն եռանդէն, ցոյց տուեց իւր համակրութիւնը ազգային բարձրագոյն դպրոցին յօգուտ մտաւոր և բարոյական զարգացման աղքատ աշակերտուհեաց, վասն որոյ Հոգաբարձութիւնս սորըը պարտաւորութիւն է համարում ի նշան իւր գոհունակութեան խնդրել Խմբագրութենէդ հրատարակել այս յօդուածը Արարատ ամսագրոյ էջերի մէջ ի խրախոյս Պարոն Մասումեանցի և յընդհանուր գիտութիւն համազգեանց։

Հոգաբարձուք Ցախկի Ալազ Քահանայ Բունկիեանց
Սիմէօն Պօղոսեանց
Յովհաննէս Սարգսեանց
Սարգիս Բուբլիկեանց
Գրիգոր Սողոմոնեանց

Թ. 25
Ի 12 Մարտի, 1874 ամի
Աստրախան։

Պ. ՅԱԿՈԲ Հ.
ԿՐԱՆԻԼՃԻԿԵԱՆՑԻ ՆՈՒԻՐ.

Խմբագրութեան Երեսաց ամսագրոյ.

Աստրախանցի Ճակոմը Հայրապետեան Կրանիլճիկեանց իւր յայտարարութեան հետ ի 26 Ճունվարի տարւոյս առաջի առնելով Հոգաբարձութեան Աստրախանայ Հայոց Ծխական երկսեռ Հոգեւոր Դպրոցաց 300 րուբլի արծաթի դրամ՝ խնդրեց Հոգաբարձական Խորհրդարանի վարկման պէս ձգել այն դրամը թագաւորական կամ քաղաքային հասարակական մի դրամատուն աճելոյ տոկոսեօք իրրև անմերձենալի գումար, և նորա շահիւք յանուն յիշատակ հոգւոյ իւր Ճովհաննէս որդւոյ՝ որ վախճանել է ի ցաւ իւր ծնողաց սրտին երիտասարդ հասակում, Ծխական Հոգեւոր Դպրոցների մէջ ունենալ մի սան (Թօշակակիր), ընտրելով այն հայազգի աղքատ ժողովրդոց որու զաւակաց մէջէն, և կրթելով այն մանուկը մտաւորապէս և բարոյապէս անուանել նորան «Սան Ճովհաննու Ճակոմը Կրանիլճիկեանց». Հոգաբարձութիւնը մեծաւ յարգանօք ընդունելով Պարոն Կրանիլճիկեանցէ այն գումարը՝ ձգեց քաղաքային հասարակական Դրամատուն, և Պարոնի խնդրոյ պէս ընտրեց մի աղքատ աշակերտ, որը յիշեալ դրամագլխոյ տոկոսիքով Դպրոցաց ծոցումը ուսանուսմ հայկական և Թուրքաց լեզու, և այն ամենայն առարկաները ուսմանց՝ որոնք սահմանած են Դպրոցաց մէջ աւանդել, և անուանեց այն աշակերտը «Սան Ճովհաննու Ճակոմեան Կրանիլճիկեանց». Ա՛լ որովհետև յիշեալ Պարոնի այսօրինակ նուիրատուութիւնը հայտնի ոչ միայն ի յիշատակ ամենասիրելի որդւոյն Ճովհաննու, այլ ի կրթութիւն հայազգի աղքատ զաւակաց, նա մնաւանդ յիշելով ուսումնասէր Ճակոմը Կրանիլճիկեանցը ունի մի այսպիսի սան և Ղզլարայ Ծխական Հոգեւոր Դպրոցի մէջ, որոյ Հոգաբարձութեան ևս առաջարկել է 200 րուբլի մի օրինակ պայմանաւ, վասն որոյ Հոգաբարձութիւնը Աստրախանայ Հայոց Ծխական երկսեռ Հոգեւոր Դպրոցաց խնդրում Խմբագրութենից, միջոցաւ Արարատ ամսագրոյ

